


11387

3(02)

♀-16



3(075)  
4-53

3394

# ԲԱՂԱԲԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ԲԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ 13 ԴԱՍ  
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ III

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԿԵՆՏՐ՝ ՇՐԱՏԱՐԱԿՋՈՒԹՅՈՒՆ  
Մ Ո Ս Կ Վ Ա, 1927

*Handwritten signature*

25 SEP 2006

1 DEC 2009

3(02)

E-16

4-53

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ 13 ԴԱՍ  
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ըստ վ. վերջաՆՍԿՈՒ

ՊՐԱԿ III



1003  
14329

1331  
~~3319~~

29 AUG 2013

11387

Զրույց առաջին

**ՀԱՍՏԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
(ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ՅԵՎ ՆՐԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ.**

Напечатано в типографии Госиздата  
„Красный Пролетарий“. Москва,  
Пименовская ул., д. № 16,  
в количестве 5000 экз.  
Главлит № 64092

**Ի՞նչպե՞ս Ա.Ռ.Ս.ՋԱՅՍՎ. ՅԵՎ Ա.ՃԵՑ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.**

Միշտ, յերբ խոսում ենք արդյունաբերության ուժեղացման և զարգացման մասին, յերբ քննում ենք այնպիսի հարցեր, վորոնք վերաբերում են գյուղական տնտեսության բարվոքմանը, մենք ամեն տեղ հիշատակում ենք Կոմունիստական կուսակցությունը, քննում նրա վորոշումները այս կամ այն խնդրի մասին:

Բանվոր դասակարգի և գյուղացիության պայքարի ամբողջ պատմության ընթացքում Կոմունիստական կուսակցությունը հանդիսանում է առաջնորդ, ղեկավար:

Բանվորներն ու գյուղացիները յերբեք չէին կարող հաղթանակ տանել, յեթե կալվածատերերի ու կապիտալիստների դեմ նրանց մղած պայքարը չղեկավարեր Կոմունիստական կուսակցությունը (բոլշևիկները): Ընկեր Լենինը միշտ նիշում էր, վոր «առանց կուսակցության, կովի մեջ կոփված և յերկաթյա՝ կուսակցության, պայքարն հաջողութամբ տանել անկարելի յե»:

MPED

54-92

Յերբ բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ հաղթեցին, ընկ. Լենինը նորից միշտ և ամենուրեք կրկնում եր, վոր Խորհրդային պետութեան կառուցումը և սոցիալիզմի շինարարութիւնը առանց Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեան անկարելի յէ:

Ի՞նչ է Կոմունիստական կուսակցութիւնը և վորտեղից է նրան այդպիսի ուժը:

Ընկ. Լենինն այդ մասին այսպես է ասում.

Կուսակցութիւնը «առաջավոր ելեմենտները\*» կազմակերպութիւնն է. կուսակցութիւնը— դասակարգի գիտակից, առաջավոր խափն է, նրա ավանգարդը\*\*): Այդ ավանգարդի ուժը 10 անգամ, 100 անգամ մեծ է, քան նրա քանակը»:

«Արդո՞ք այդ հնարավոր է: Արդո՞ք հարյուրների ուժը կարո՞ղ է գերազանցել հազարների ուժին»,— հենց այստեղ հարց է տուլիս ընկ. Լենինը և պատասխանում է. «Կարող է գերազանցել՝ յերբ հարյուրները կազմակերպված են.— կազմակերպութիւնը տասնապատկում է ուժերը»:

Պրոլետարական ուժեղ կուսակցութիւնն ստեղծելու համար ընկ. Լենինը աշխատել է իր ամբողջ կյանքում, նա զբան նվիրեց իր ամբողջ խելքը, իր ուժերը: Ահա թե ինչու մենք ասում ենք, վոր մեր կուսակցութիւնը— Լենինի կուսակցութիւնն է. նա առաջ է ընթացել, և այժմ, նրա մահից հետո, անշեղ հետևում է նրա ուսմունքին, ղեկավարում է բանվոր դասակարգի ու գյուղացիութեան պայքարը այնպես, ինչպես սովորեցրել է ղեկավար ընկ. Լենինը՝ բոլոր ճնշվածների մեծ առաջնորդը: Մեր կու-

\*) Ելեմենտ—նշանակում է բազկացուցիչ մաս:

\*\*\*) Ավանգարդ—նշանակում է բանակում առաջավոր գունդ, առաջավոր զորախումբ, վոր միշտ զորքի առաջից է գնում:

սակցութիւնը կազմվել է դեռ անցյալ դարում և կազմվել է կայուն հեղափոխականներից: Աշխատանքն սկսվել է Մոսկվայի, Լենինգրադի և ուրիշ մեծ արդյունաբերական քաղաքների բանվորական փոքրիկ կրուժոկներում: Այդ կրուժոկները կազմակերպվում էին գաղտնի՝ ինքնակալութեան դեմ կռվելու համար, բանվորական մասսաների մեջ ագիտացիա և պրոպագանդ ժողելու համար:

Հեղափոխականների կրուժոկները սկզբում ցրված էին առանձին քաղաքներում՝ Փարիզիկներում, գործարաններում և աշխատանքը տանում էին անկազմակերպ, միմյանցից անջատ:

Շատ ջանքեր գործ դրեց ընկ. Լենինը, վոր համախմբի, միացնի այդ ցրված կրուժոկները: Յեվ 1898 թ. տեղի ունեցավ Կուսակցութեան առաջին համագումարը:

Բայց կուսակցութեան մեջ շուտով նկատվեց հայացքների տարբերութիւն և 1903 թվին կուսակցութիւնը բաժանվեց յերկու մասի. մի մասը կազմում էին այսպես կոչված մենշեիկները, իսկ մյուս մասը՝ բոյլշեիկները:

Բոյլշեիկների գլուխն էր անցած ընկ. Լենինը, նա նրանց կազմակերպեց, նա նրանց ղեկավարեց:

Բոյլշեիկների և մենշեիկների տարբերութիւնը ահա թե ինչու մն էր կայանում.— բոյլշեիկները լենինյանները ապացուցում էին, վոր ցարիզմի հանդեպ տեղի ունեցող հեղափոխութեան մեջ գլխավոր և վճռողական դերը կատականի պրոլետարիատին, և վոր պրոլետարիատը կարող է ցարական գահը խորտակել միմիայն գյուղացիութեան հետ դաշնադիր լինելով, և ղեկավարելով գյուղացիների այն պայքարը, վոր մղվում է ցարի և կալվածատերերի դեմ՝ հող ստանալու համար:

Իսկ մենշեիկները պնդում էին, վոր Ռուսաստանում մինչև պրոլետարական հեղափոխութիւնը դեռ շատ ժամանակ կա, և վոր մեզ մոտ պետք է լինի նախ՝ բուրժու-

ական հեղափոխութիւն, և ցարից իշխանութիւնը պետք է խլե նրանից անբավական բուրժուազիան, իսկ բանվոր դասակարգը այդ հեղափոխութեան մեջ պետք է միայն աջակցի բուրժուազիային: Յե՛վ նրանք կոչ եյին անում բանվորներին՝ միանալ բուրժուազիային և վոչ թե գյուղացիութեանը:

Գործն ինքը ցույց տվեց, վոր բոյլշևիկներն, ընկեր լենինի հետ միասին, ուղիղ եյին հասկանում բանվորական կուսակցութեան խնդիրները, բանվոր դասակարգի խնդիրները, վորպէս հեղափոխութեան մեջ գլխավոր ուժի և վորպէս գյուղացիութեան ղեկավարի:

Մենշևիկները մեկ աստիճանից մյուսը սայթաքելով, վերջիվերջո միանգամայն դավաճանեցին բանվոր դասակարգին և աշխատավորութեան ազատագրական գործին: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ նրանք իրենք դուրս յեկան պաշտպանելու և բանվորներին ևս կոչ արին պաշտպանել ցարական կառավարութիւնն ու բուրժուազիային: Յարիզմի գահընկեցութիւնից հետո նրանք Խորհուրդներում և ժամանակավոր Կառավարութեան մեջ վոչ թե կալվածատերերի և կապիտալիստների դեմ եյին պայքարում, այլ պայքարում եյին հոգուտ սրանց, պայքարում եյին բանվորների ու գյուղացիների դեմ:

Մենշևիկները Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո բացարձակ կերպով անցան Խորհրդային իշխանութեան թշնամիների կողմը, միաբանվեցին բելոգվարդեյեց գհներալներին հետ և ոտարյերկրյա բուրժուազիային կոչ արին արյան մեջ խեղդել բանվորա-գյուղացիութեան իշխանութիւնը:

Բոյլշևիկները հենց սկզբից այն կարծիքին եյին, վոր Կոմունիստական կուսակցութիւնը, վորպէս մարտական կուսակցութիւն, պետք է ուժեղ լինի, դիսցիպլինա պահպանող: Նրա մեջ ամեն մի աշխատող պետք է յենթարկվի

արդեն ընդունված վորոշումներին, ակտիվ կերպով դրանք կիրառի: Մենշևիկները այլ կերպ եյին մտածում: Նրանք հակառակ եյին, վոր կուսակցութեան մեջ խիստ դիսցիպլինա լինի, կուսակցութեան անդամ եյին համարում նրանց, ովքեր ինքնակալութեան դեմ մղած պայքարին միայն խոստով համակրում եյին՝ նրա դեմ պայքարելու համար վոչինչ չանելով: Յե՛վ յերբ ցարական կառավարութիւնը 1905 թվին արյան մեջ խեղդեց բանվորների առաջին հեղափոխութիւնը, ճնշեց գյուղացիութեան հեղափոխութիւնը, — մենշևիկները բոլորովին հրաժարվեցին հեղափոխական պայքարից, դադարեցին լինել մասսաներին իրենց հետևից տանող կուսակցութիւն:

Բոյլշևիկները մինչև իսկ ամենածանր տարիներում չդադարեցին պայքարել ինքնակալութեան դեմ, անվախ դուրս եյին գալիս ցարական կառավարութեան հայտարարած պատերազմի դեմ, և ինքնակալութեան կործանումից հետո ընդհատակից դուրս եկան վորպէս միաձույլ կազմակերպված կազմակերպութիւն: 1917 թվի գարնանը մեր կուսակցութեան մեջ կային 30.000 մարդ: Այժմ մեր կուսակցութիւնն ունի մեկ միլիոնից ավելի անդամ:

ՀՍ.ՐՅԵՐԿՐԿԵՆՆԵՐ ԵՆ ԿՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԿԱՎՈՐ ԵՆ ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Ի՞նչ հանգամանքներ են կուսակցութիւնը դարձնում կարող ուժ:

Յե՞րբ առաջ յեկան բոյլշևիկները և մենշևիկները:

Ինչո՞ւն են կայանում բոյլշևիկների և մենշևիկների հիմնական տարբերութիւնը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԿԱՎՈՐ:

Ավելի լավ ցույց տալու համար՝ թե կուսակցութիւնը այժմ ումի՞ց է կազմված և ի՞նչպէս է աճում, քննենք կուսակցական քանակական աճումը 1924-ից մինչև 1926 թիվը

և պարզենք, թե այդ աճումը ում հաշվին է տեղի ունե-  
նում,—բանվորներին՝, գյուղացիներին՝, թե՞ ազգաբնակչու-  
թյան ուրիշ խավերի հաշվին:

1924 թվի հունվարի մեկին կուսակցութայն մեջ կային  
446.000 մարդ (թեկնածուներով)

1925 թ. հունվ. մեկին 741.000 մարդ »

1926 թ. հունվ. մեկին 1.076.814 մարդ »

Այս թվերից յերևում է, վոր երկու տարվա ընթաց-  
քում կուսակցությունն աճել է ավելի քան յերկու անգամ:

Իսկ թե ովքեր են մտել կուսակցութայն մեջ այս  
յերկու տարվա ընթացքում, յերևում է հետևյալ թվերից.

1924 թվի հունվարին կուսակցութայն մեջ կային  
196.000 բանվոր: 1925 թ. հունվարին բանվորների թիվը  
հասնում է 429.000-ի, այսինքն մեկ տարվա ընթացքում  
բանվորների թիվը ավելացել է ավելի քան յերկու անգամ:

1926 թ. սկզբին կուսակցութայն մեջ բանվորները կազմում  
են կուսակցութայն ամբողջ կազմի արդեն կեսից ավելին—  
624.552 մարդ, վոր կազմում է 58%: Կուսակցութայն  
մեջ յերեք տարվա ընթացքում բանվորների թիվը, 1924 թ.  
համեմատությամբ, ավելացել է յերեք անգամ: Ներկա  
տարում (1926) կուսակցութայն սոցիալական կազմը այս-  
պես է. ամեն մի 100 մարդուն ընկնում է—բանվորներ՝ 58,  
գյուղացիներ՝ 25 և ծառայողներ՝ 7: Քանակով ավե-  
լանալով, կուսակցությունը իր շարքերը շարունակ մաք-  
րում է այնպիսիներից, ովքեր իրենց վարքով խախտում  
են կուսակցութայն կանոնադրությունը, ովքեր իրենց  
վարմունքով գցում են կուսակցութայն վարկը անկուսակ-  
ցական բանվորների և գյուղացիների շրջանում (որինակ՝  
1921 թվին կուսակցութայն գտման ժամանակ կուսակ-  
ցությունից դուրս է արված 174.931 մարդ, իսկ 1924 թ.—  
16.000-ից քիչ պակաս):

Կուսակցությունը անդադար ուժեղացնում է իր պրոլե-  
տարական կորիզը արդյունաբերական բանվորներով (դադ-  
գահի), իր կազմի մեջ է առնում միջակ, չքավոր գյու-  
ղացիներից՝ առաջավորներին և բատրակներին, կարմիր-  
բանակայիններին, ծառայողներից՝ կուսակցութայնն ամե-  
նաանձնվերներին, սակայն միայն նրանց, ովքեր դեպի  
կուսակցությունն ու Սորհրդային իշխանությունն ունեցած  
իրենց անձնվիրությունը գործով ապացուցել են:

Ընկ. Լենինը միշտ պնդում էր, վոր պետք է կուսակ-  
ցութայն մեջ վորքան կարելի յե շատ ընդունել Փաբրի-  
կաներում և գործարաններում աշխատող գիտակից բանվոր-  
ներ: Կուսակցությունը իր առաջնորդի և ուսուցչի այդ  
պատգամը անշեղ կատարում է և իր կազմի մեջ բանվոր-  
ական կորիզը ամեն կերպ ուժեղացնում: Բանվորական  
կորիզի նշանակությունը կուսակցութայն մեջ հսկայական  
է: Կուսակցութայն անդամ բանվորը աշխատում է գոր-  
ծարանում և Փաբրիկայում. նա գիտե բանվորների մեծա-  
մասնության դրությունը, նա մտածում և ապրում է իր  
դասակարգի շահերով: Այդպիսի առաջավոր գիտակից բան-  
վորը հավատարմորեն անց է կացնում կուսակցական պրո-  
լետարական քաղաքականությունը:

Այդ յերբեք չի նշանակում, վոր կուսակցությունն  
իր շարքերում անխտիր ընդունում է բանվորներին: Բան-  
վորների մեջ էլ զանազանություն կա: Այդ պատճառով էլ  
կուսակցությունը իր շարքերն է ընդունում ամենից սու-  
կուն, զարգացած, գիտակից, դիսցիպլինային յենթարկվող  
բանվորներին: Նրանք կազմում են կուսակցութայն հիմ-  
նական բանվորական կորիզը: Կուսակցությունը իր շար-  
քերը խտացնելով արդյունաբերական բանվորների պատ-  
րաստված, լավագույն մասով, իր գործի համար վտանգա-  
վոր է համարում կուսակցութայն մեջ ընդունել անբա-  
վարար չափով պատրաստված կիսաբանվորներին և ջահել

բանվորներին, մանավանդ յեթե նրանք պրոֆեսիոնալ մի-  
ությունների մեջ չեն անցել հարկավոր դպրոց:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր կուսակցությունը  
լուրջ պահանջներ ե ներկայացնում նրա շարքերը մտնող  
և նրա շարքերում ընդունվել ցանկացող ամեն մի բան-  
վորին:

ՀԱՐՅԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. 1926 թվի հուն-  
վարին 244 (բ) քանի՞ անդամ ունեւր:

244 (բ) սոցիալական կազմը 1926 թվին:

Կուսակցությունը ի՞նչ պահանջներ ե ներկայացնում  
իր անդամներին:

ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՅԻՍԿԱՆ ՄԱՍԸ.

Մենք արդեն տեսանք, վոր մեր կուսակցության մեջ  
գերակշռող մասը կազմում են բանվորներն ու գյուղացի-  
ները: Մենք արդեն գիտենք նաև այն, թե կուսակցու-  
թյան համար ինչ նշանակութուն ունի նրա բանվորական  
մասը: Այժմ տեսնենք, թե ինչպես ե կուսակցական կազ-  
մակերպությունների կազմն ու աշխատանքը գյուղում:

1905 թ. հունվարի 1-ին կուսակցության մեջ կային  
13.879 գյուղական բջիջներ, վոր կազմում ե 51%, այ-  
սինքն՝ կուսակցական բջիջների ընդհանուր թվի կեսից  
ավելին:

1905 թ. հունվարի 1-ին գյուղական 13.879 բջիջնե-  
րից 6,5% կազմում էին խորհրդային տնտեսությունների,  
կոլեկտիվ ընկերությունների և կոմունաների բջիջները:  
Գյուղական բոլոր բջիջների կազմում կան 154.730 կո-  
մունիստ, գրանցից՝ կուսակցության անդամներ են 91.160,  
իսկ թեկնածուներ՝ 62.571:

Գյուղում կոմունիստների թիվը, համեմատած գյու-  
ղացիական ամբողջ մասսայի հետ, աննշան ե: Ահա ինչ-  
պես ե վորոշել ընկ. Ստալինը կոմունիստների գրությունը՝  
գյուղացիական անկուսակցական միջավայրում:

«Գյուղերում մենք ունենք կուսակցական բջիջների  
մի բարակ թել: Այնուհետև կա կուսակցությանը համա-  
մակրող անկուսակցական գյուղացիների նույնքան բարակ  
մի թել: Իսկ դրանց յետևում ձգվում ե տասնյակ միլիո-  
նավոր անկուսակցական գյուղացիների ովկիանը, վորոնց  
չի կապում և չի կարող կուսակցության հետ կապել  
անկուսակցական «ափտիվի» բարակ թելը: Մի բուն կո-  
մունիստների վրա պարտականութուն ե դրվում ղեկա-  
վարել միլիոնավոր անկուսակցական մասսաները: Գյուղա-  
կան բջիջների կազմի մեջ, վորոնք բաղկացած են ընդա-  
մենը մի տասը մարդուց, յերկրագործ գյուղացիները  
շատ ղեպքերում 3—4 հոգի յեն, մյուսները՝ մի ժամանակ  
գյուղացի յեն յեղել, իսկ այժմ տնտեսությամբ չեն  
պարապում, այլ ծառայում են Խորհուրդում, միլիցիա-  
յում, կոոպերատիվում՝ ընտրովի պաշտոններում կամ  
վարձով:

Յեթե գյուղական 154.730 կոմունիստներին, այսինքն՝  
մեր կուսակցության գյուղացիական մասը առանձին վերց-  
նենք, և նրա կազմը քննենք այն տեսակետից, թե կո-  
մունիստները այդտեղ ինչ տեսակի աշխատանքներ են  
կատարում, ապա կստանանք այսպիսի պատկեր.

154.730 մարդուց՝ յերկրագործ գյուղացիներ—59.442,  
այսինքն՝ 38,5%. բատրակներ և գյուղ.տնտ. բանվոր-  
ներ՝ 3.580, այսինքն՝ 2,3%. խորհրդային, կուսակցական,  
կոոպերատիվային և ուրիշ կազմակերպություններում աշ-  
խատողներ—91.708, այսինքն՝ 59,3%.

Կուսակցության գյուղական բջիջների կազմի մեջ  
յերկրագործ գյուղացիներ մինչև այժմ ավելի քիչ են, քան  
նախկին գյուղացիները (իսկ այժմ՝ ծառայողները): Գյու-  
ղացիական բջիջները մինչև այժմ քիչ են առնում իրենց  
շարքերը յերկրագործ-գյուղացիներին, չքավոր-գյուղացի-  
ներին և գյուղի բատրակային մասը:

Գյուղական բլիժները կազմը լավացնելու մասին կուսակցութիւնը մի անգամ չէ վոր ցուցմունքներ ե տվել: Կուսակցութեան 14-րդ համագումարը (1925 թ. գարնանը) անհրաժեշտ գտավ «կուսակցութեան գյուղական կազմակերպութիւնների կազմը լրացնել և փոփոխել՝ յետանդուն աշխատելով, վոր կուսակցութեան մեջ առնվեն թույլ տնտեսութեան տեր գյուղացիների հեղափոխական-առաջավոր ելեմենտները (առանձնապէս գեղջկուհիներին, վորոնք անցած են պատգամավորական ժողովներով), ինչպէս նաև բատրակներին և միջակ գյուղացիների լավագույն մասը:

Յե՛վ այժմ կուսակցութեան գյուղական կազմակերպութիւնների գլխավոր խնդիրն է կազմում՝ գյուղի բլիժներում նոր թեկնածուներ ընտրելու հարցում ծայր աստիճանի ուշադիր մտտեցում ունենալ: Անհրաժեշտ է, մի կողմից հետևել, վոր մեր գյուղական շարքերը չսողան կուլակը, հարբեցողը, գողը կամ այնպիսին, վոր լուկ տեղ ե փնտռում, առհասարակ անպետք ելեմենտները. և ընդհակառակը, գյուղական պրոլետարիատի, չքավոր և միջակ գյուղացիութեան լավագույն ներկայացուցիչներին պետք է թույլ տալ կուսակցութեան մեջ մտնելու, ամեն կերպ գյուղացնելով պահանջվող ձևակերպութիւնները:

Վորպեսզի բատրակներին, յերկրագործներին և կարմիր-բանակայիններին դյուրութիւն տրվի կուսակցութեան մեջ մտնել, 14-րդ համագումարը անհրաժեշտ գտավ այդպիսիների համար պահանջվող յերաշխապորութիւնների պայմանները թեթևացնել. այդպիսիների համար այսուհետև պահանջվում է 2 անձի յերաշխապորութիւն, իսկ յերաշխապորողների ստաժը\*)—միայն յերկու տարի:

\*) Ստաժ — նշանակում է տարիների քանակը, ներկա դեպքում՝ կուսակցութեան մեջ անցկացրած տարիների քանակը, այսինքն՝ յերբ բատրակը ցանկանում է կուսակցութեան մեջ մըտ-

Բացի դրանից, համագումարը տեղական կուսակցական կազմակերպութիւնների վրա պարտականութիւն դրեց ոգնել կուսակցութեան մեջ ընդունվել ցանկացող գյուղացիներին՝ յերաշխապորներ գտնելու գործում:

Գյուղացիներին՝ չքավորներին և միջակներին կուսակցութեան մեջ ընդունելու խնդրում կարող է մեծ աջակցութիւն ցույց տալ Կոմյերիտմիութիւնը, վորն իր շարքերում գյուղի տնտեսութեան հետ կապված գյուղացիական յերիտասարդութիւնից պատրաստում է ապագա կուսակցականներ: Կուսակցութեան այդպիսի անդամները, վորոնք դուրս են յեկել հենց գյուղացիութեան միջավայրից, վորոնք ապրում են գյուղացիական շահերով, կարող կլինեն գյուղացիութիւնը տանել կուսակցութեան յետևից, գործի վրա նրան ապացուցել, վոր ուղիղ է կոմունիստական ծրագիրը:

Գյուղական բլիժում վորքան շատ են այնպիսի գյուղացիներ, վորոնք անձնապէս կամ իրենց ընտանիքի միջոցով պարապում են գյուղական տնտեսութեամբ, այդպիսի բլիժը այնքան ավելի՛ յե հետաքրքրվում գյուղացիական տնտեսութեան կարիքներով, իր ուշադրութիւնը այդ կարիքների վրա յե դարձնում. գյուղացիներն այդպիսի բլիժին ավելի՛ յեն հավատ ընծայում. այդպիսի բլիժին հետևում են գյուղացիական ազգաբնակչութեան լայն մասսաները: Իսկ այդ—ամենագլխավորն է կուսակցական աշխատանքում:

ՀԱՐՅԵՐ՝ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ համար կուսակցութիւնը ձգտում է գյուղում իր կազմակերպութեան մեջ քաշել առաջին հերթին՝ յերկրագործ - գյուղացիներին: Կուսակցութեան մեջ ընդունվելու Խ՞նչ արտոնութիւններ կան բատրակների, հողագործ-գյուղացիների համար:

նել, դրա համար պահանջվում է, վոր յերաշխապորեն յերկու այնպիսի կոմունիստ, վորոնք իրենք կուսակցութեան մեջ են ընդամենը յերկու տարի:

Մեր կուսակցական աշխատանքի գլխավոր թերու-  
թյունը գյուղում, ինչպես ընկեր Սաալինն ե ասել, կա-  
յանում ե նրանում, վոր բլիժների շուրջը բացակայում ե  
լայն ակտիվ՝ անկուսակցական այնպիսի գյուղացիներից,  
վորոնք համակրում ե գյուղում ոգնում են կուսակցական  
կազմակերպություններին:

Անկուսակցական գյուղացիների այդպիսի առաջավոր,  
քաղաքականապես ակտիվ խավը պետք ե հանդիսանա կա-  
մուրջ՝ կուսակցության ե գյուղացիության լայն մասսա-  
ների միջև:

Կուսակցության գյուղական կազմակերպությունը  
չկարողանալով իր շուրջը համախմբել գյուղացիների ազա-  
ջավոր խավերը՝ ամեն գործում ել միանգամայն անոգնա-  
կան կմնա: Առանց գյուղացիների լայն աջակցության,  
բլիժը վոչինչ անել չի կարող—վո՛չ գյուղական տնտե-  
սության բարվոքման, վո՛չ կոոպերացման ե կուլտուրական  
այլ նախաձեռնությունների խնդիրներում ե վոչ ել՝ ազգա-  
բնակչության զանազան խավերի վրա քաղաքական ազդե-  
ցություն ձեռք բերելու հարցում: Ընկ. Լենինը շատ անգամ  
ե կրկնել, վոր աններելի ինքնապարժենկոտություն կլիներ  
մտածել, թե միայն կոմունիստների ուժերով կարելի կլինի  
կոմունիզմ կառուցել: Կոմունիստները անկուսակցական  
մասսաների մեջ—նույնն ե թե՛ մի կաթիլը ծովում: Այդ  
կաթիլը կարող կլինի յերկիրը կառավարել ե հասցնել կո-  
մունիզմին միայն այն դեպքում, յերբ նա կկարողանա ան-  
կուսակցականներին մասնակից անել ակտիվ շինարարու-  
թյան ե դրանով աշխատավորությանը իր հետ առաջ տա-  
նել: Թող այդ շարժումն ընթանա զանդադ, սակայն այն-  
պես, վոր կոմկուսի յետևից ընթանա ամբողջ մասսան:

Անկուսակցական գյուղացիներից ինչպե՞ս առաջ բե-  
րել ե կուսակցության շուրջը կազմակերպել ակտիվ:

Այդ խնդրի լուծման ճանապարհը ցույց ե տալիս ընկ.  
Ստալինը. «Կուսակցության շուրջը անկուսակցական գյու-  
ղացիներից կազմված լայն ակտիվ ստեղծել հնարավոր ե  
միայն գյուղի գործնական կարիքների շուրջը տեղի ունե-  
ցող մասսայական աշխատանքի ընթացքում, գյուղում խոր-  
հրդային լայն շինարարության ընթացքում գյուղացիու-  
թյանը գավառամասի, գավառի ե նահանգի կառավարու-  
թյան գործին մասնակից անելու ճանապարհով: Խորհուրդ-  
ները ուժեղացնել, նրանց վտարի կանգնեցնել, խորհուրդ-  
ների մեջ մտցնել գյուղացիության բոլոր լավագույն ելե-  
մենտներին,—ասա՛ այն ուղին, վորով ընթանալով, կա-  
րելի կլինի անկուսակցական գյուղացիներից կուել-կուփել  
ակտիվ»:

Անհրաժեշտ ե, նախ՝ ճգնել, վոր ամեն մի կոմու-  
նիստ ե կոմյերիտական ըմբռնի կուսակցական այս հիմ-  
նական աշխատանքի անհրաժեշտությունը գյուղում: Ար-  
դյո՞ք մշակվում ե բլիժի ե գյուղխորհրդի աշխատանքի  
պլան, արդյո՞ք դրանց հաշվետվությունների հիման վրա  
կատարվո՞ւմ ե գնահատություն՝ ավելի բարձր որգանների  
կողմից. հոգատարության կենտրոնական խնդիրը միշտ ե  
ամեն տեղ պետք ե լինի խորհուրդների գործնեյության  
աշխուժացումը ե անկուսակցական գյուղացիներից ակտիվ  
կազմելը: Այս հարցի ըմբռնումից ե գործնական կյանքում  
այս հարցի լուծումից ե կախված գյուղական կոմունիստի  
ե կոմյերիտականի քաղաքական ամբողջ դաստիարակու-  
թյունը:

Պետք ե գործով ցույց տալ, վոր կոմունիստները իշ-  
խանություն չեն բանեցնում անկուսակցական գյուղացի-  
ների նկատմամբ, վոր կոմունիստները սրանց լավագույն  
խորհրդատուներն ու ոգնականներն են:

Մինչև այսոր ես պատահում են դեպքեր, յերբ գյու-  
ղական կոմունիստները իրենց պահում են «մեծավորի»

պես, անկուսակցական գյուղացիները հետ կոպիտ են վարվում: Այդ տեղի յե ունենում հաճախ այն պատճառով, վոր գյուղում աշխատող շատ ընկերներ մինչև այժմ վոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ, թե գյուղացիական միջավայրում ի՞նչ է բլիշը, ի՞նչ պետք է անի ու ինչպե՞ս պետք է անի:

Կուսակցության վո՛չ գավառամասային կոմիտեն և վո՛չ ել գյուղական բլիշը վարչական որդաններ չեն և վարչական վո՛չ մի իրավունք չունեն. ուստի և բացի իրենց անդամներից, վորևե մեկին հրամայել՝ յերբեք չեն կարող:

Յերբ բլիշի առաջարկներն ընդունված կլինեն խորհրդի կողմից, միայն այն ժամանակ դրանք պարտադիր կլինեն բոլոր քաղաքացիների համար:

Այդ պետք է յերբե՛ք չմոռանալ:

Գյուղացիները հակառակ չեն, վոր կոմունիստները ղեկավարեն: Գյուղացիներն ընդունում են, վոր կոմունիստները ունեն փորձ, վճռականություն, նախաձեռնության վողի: Այնտեղ, ուր ղեկավարությունն ուղիղ է անցկացվում, այնտեղ բլիշը հանդիսանում է ընդհանուրից ճանաչված ղեկավար: Գյուղացիները ղե՛մ են, գյուղացիների համար անախորժ է միայն այն, վոր կոմունիստները հրամանատարություն են անում, նրանց որինական իրավունքները անապարժորեն վտանահարում են:

Բլիշի վերաբերմունքը ղեպի անկուսակցականները ուղիղ հասկանալու համար, պետք է հիշել, վոր կոմունիստը վո՛չ մի արտոնություն, վո՛չ մի առանձին իրավունք չի վայելում, իսկ պարտականություններ, հասարակական և անձնական պարտականություններ նա ավելի՛ ունի, քան անկուսակցականը: Չե՞ վոր կուսակցությունն իր մեջ է առնում այնպիսիներին, վորոնք հասարակական աշխատանքում կամավոր կերպով իրենց վրա ավելի՛ շատ պարտականություններ են վերցնում: Ուրեմն կուսակցությունը

անկուսակցական մասսաների նկատմամբ պարտավորություններ է ստանձնում:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՐՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ անհրաժեշտ է ամուր կապ սահմանել կուսակցական կազմակերպության և գյուղացիական անկուսակցական ակտիվի միջև: Ի՞նչ միջոցներով կարելի յե կուսակցության շուրջը գյուղացիական անկուսակցական ակտիվ կազմակերպել:

Գյուղական բլիշների գործնական աշխատանքի մեջ ի՞նչ թերություններ պետք է վերացնել՝ գյուղացիական ամբողջ մասսային ավելի մերձենալու համար:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԻ Ե ԼԻՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԸ.

Պորհուրդների ընտրական կամպանիան, 1925 թվի վերջում և 1926 թ. սկզբում, ցույց տվեց, վոր գյուղացիների ուշադրությունը իշխանության ստորին որդանների նկատմամբ բավական մեծացել է: Ջրավոր գյուղացիության պայքարը կուլակության դեմ՝ խորհուրդներին տիրանալու համար՝ իսկական դասակարգային պայքարի բնույթ է ստանում, յերբեմն շատ սուր ձևերով:

Գյուղացիներին շատ է հուզում, շատ է անհանգըստացնում այն հարցը, թե ո՞ւմ պետք է անցկացնել խորհրդի մեջ. համայնական ժողովներում առանձին թեկնածուների շուրջը տաք վիճաբանություններ են տեղի ունենում. գյուղական ընտրողն այժմ իր ձայնն այլևս անտարբեր կերպով չի տալիս վորևե մեկին, այլ թեկնածուների միջև ընտրություն է անում, նրանց լավ ու վատ կողմը ի նկատի ունենում:

Իսկ ինչպիսի՞ պահանջներ է այժմ գյուղացին ներկայացնում նրան, ով կանգնած է լինում ընտրական ղեկավարող կազմակերպությունների գլուխը: Լավ հասկանալով, վոր գյուղը կամ գավառամասը կառավարելը հեշտ գործ չի և վոր դա պահանջում է ընդունակություններ

1003  
14329  
54-92



ու վորոշ գարգացում, և վոր ընտրվողները վրա գյուղական և գավառամասային որգաններում տարվող աշխատանքը մեծ պատասխանատվություն է դնում,—գյուղացիները սիրով են առաջարկում կոմունիստները թեկնածուները, նրանց համարելով ավելի փորձված, հասարակական աշխատանքում արագաշարժ մարդիկ: Գյուղացիները մեծ նշանակություն են տալիս ընտրվողի նաև անձնական հատկություններին,—թե արդյոք նա լավ աշխատող է, արդյոք ազնիվ է, արդյոք գյուղացիների հետ լավ կվերաբերվի:

Ի՞նչպես պետք է լինի կոմունիստը, վորպեսզի արժանապատվությամբ կրի Համամիութենական Կոմունիստական կուսակցության անդամի կոչումը և արդարացի աշխատավոր բնակչության լայն մասսաների վստահությունը, այն բնակչության, վորի շրջանում, կուսակցության հանձնարարությունները, նա աշխատանք է տանում:

Գյուղական կոմունիստը ամենից առաջ պետք է լինի անձնավեր, տակուն, կուսակցության դիսցիպլինային յենթարկվող անդամ: Նա չպետք է մոռանա, վոր ինքը անց է կացնում կուսակցության քաղաքականությունը գյուղում, իսկ այդ հանգամանքը նրա վրա հսկայական պատասխանատվություն է բառնում: Վորպեսզի ավելի քիչ սխալներ չգործի, նա պետք է միշտ տեղյակ լինի կուսակցության ցուցմունքներին՝ գյուղում կուսակցական աշխատանք տանելու թեկուզ հիմնական հարցերի վերաբերմամբ: Անհրաժեշտ է գիտենալ կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը: Կոմունիստը պետք է հետևի իր յուրաքանչյուր քայլին՝ մի րոպե չմոռանալով, վոր իր գործած սխալները ու զանցառությունների համար կըրկնակի պատասխանատվություն է կրում—կուսակցության առաջ և որենքի առաջ:

Կոմունիստը դեպի անկուսակցական գյուղացին պետք է վերաբերվի այնպես, ինչպես վերաբերվում են իրար

հավասար մարդիկ, առանց ամբարտավանություն, առանց հրամանատարություն անելու, վարեցողության մեջ նա պետք է լինի ուշադիր և միշտ ականջ դնի, թե գյուղացուն ի՞նչ է գրադեցնում:

Յուրաքանչյուր կոմունիստ ծայր աստիճանի զգույշ պետք է լինի այն հայտարարությունների նկատմամբ, վոր նա անում է կուսակցության անունից: Նա պետք է համարձակություն ունենա խոստովանվելու, վոր այս կամ այն հարցի մասին չգիտե և դրան պատասխանել չի կարող:

Կուսակցությունը կոմունիստին ինչ գործի էլ դնելու լինի, նա ամեն տեղ պետք է լինի ակտիվ աշխատող, ջանասեր, պետք է ճշտապահության, մաքրության և ազնվության որինակ լինի:

Կոմունիստը պարտավոր է գրագետ լինել: Յեթե նա կուսակցության մեջ ընդունվել է բավական չափով գրագետ չլինելով, ապա նա կուսակցության մեջ անցկացրած իր հենց առաջին տարվա ընթացքում պարտավոր է գրագիտություն սովորել:

Գյուղական տնտեսության հետ կապված կոմունիստը պետք է որինակելի տնտեսաբար լինի, ձգտելով վոչ թե իր սեփականության չափը ավելացնելու, այլ իր տնտեսությունը կուլտուրական միջոցներով լավացնելու: Տնտեսության տեր կոմունիստը պարտավոր է կոոպերացիայի մեջ մտնելու, նա ամենքից առաջ է պարտավոր իր տնտեսությունը կուլտիվի մեջ մտցնել:

Անձնական կյանքում՝ կոմունիստը պետք է լավագույն որինակ լինի իր համագյուղացիների համար, ձրգտելով իր ընտանեկան կենցաղում սահմանել նույնպիսի հարաբերություններ, վորպիսիք մեր կուսակցությունը հայտարարել է և վորոնց համար նա պայքարում է:

ՀԱՐՅԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ Գյուղացիներն ի՞նչ հիմնական պահանջներ են անում ամեն մի կոմունիստից:

Կոմունիստը իր կյանքում ինչո՞վ պետք է տարբերվի անկուսակցականից:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԴՍՑԱԾԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀՍՄՍՐ.

Հաշվեցե՛ք, թե կուսակցութեան բանի՞ անդամ կա ձեր գյուղում: Կազմեցե՛ք դիտորամամա, վորից յերևար, թե ձեր գյուղի կուսակցական բջիջում քա՞նի մարդ յերկրագործ-գյուղացիներ են, քա՞նիսը—բանվորներ և ծառայողներ:

Ձե՛ռք բերե՛ք կուսակցութեան ծրագիրը և ուշադրութեամբ կարդացե՛ք ու քննեցե՛ք նրա առաջին մասը—«Կուսակցութեան անդամների մասին»:

Բջիջի ժողովում հաշվի առե՛ք անկուսակցական ակտիվ առաջավոր գյուղացիներին և մտածեցե՛ք, թե յերիտասարդութունն ի՞նչ կերպ կարող է ոգտագործել նրանց փորձը, նրանց գիտելիքները:

ԻՆՁ Ե ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ.

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆ Ե.

Նախընթաց զրույցից մենք գիտենք, վոր բանվոր դասակարգի և գյուղացիութեան պայքարը ղեկավարում է Կոմունիստական կուսակցութեանը: Բայց հին հեղափոխականները չեն կարող կոմունիստական հասարակութեան կառուցման խնդիրը լիովին իրագործել, վորովհետև սոցիալիզմի շինարարութեանը, ինչպես մենք տեսանք, տեղի կունենա տասնյակ տարիների ընթացքում և հին սերունդը ուղղակի չի ապրի մինչև այդ շինարարութեան հետ կապված բոլոր խնդիրների լրիվ իրագործումը: Սոցիալիզմի շենքի ավարտումը բաժին է ընկնում կոմունիստների մատաղ սերնդին: Այդպիսի դժվար և մեծ գործը չի կարող հաջողութեամբ կատարվել, յեթե դրա համար մեծ պահանջ-կոտորութեամբ և լրջութեամբ չպատրաստվենք: Ուստի և Կոմյերիտմիութեան հիմնական խնդիրն է՝ լինել սոցիալիզմի շինարարների դպրոց: Այդ դպրոցում յերիտասարդութունը պետք է զինվի այն գիտելիքներով, վոր անհրաժեշտ է սոցիալիզմի շինարարութեանը մասնակցելու համար:

Կուսակցութիւնը միշտ կորուստներ ե ունենում: Վոչ միայն անմիջական զինված պայքարը, այլ և առորյա աշխատանքում ունեցած լարված մասնակցութիւնը կուսակցութիւն շարքերից բազմաթիւ գոհեր են խլում: Մեր կորցրած ընկերների տեղը պետք է բռնեն տասնյակ նորերը: Կոմյերիտմիութիւնը, վոր յերիտասարդութիւնը դաստիարակում է լինել տոկուն, հեղափոխութիւնը անձնվեր աշխատողներ և մարտիկներ, նա դրանով պատրաստում է կուսակցութիւն համար անհրաժեշտ փոխարինողներ:

Այդպիսի դաստիարակութիւնը չի կարող բաժանված լինել անմիջական պայքարից ու շինարարական աշխատանքից: Կոմունիստի դաստիարակութիւնը այն չէ, վոր նա գիրք է կարդում: Կոմունիստը լավ է միայն այն ժամանակ, յերբ նա գիտե գրքից ստացած գիտելիքները կյանքում գործադրել, իսկ դրա համար պետք է գործնականապես աշխատել, պետք է կարողանալ նկատված թերութիւններն ուղղել: Սոցիալիզմի շինարարութիւնը, ինչպես մենք այդ գիտենք Պորհրդային իշխանութիւն՝ գյուղում տարվող քաղաքականութիւնից (տես զրույց I, պրակ III-րդ), անկարելի յե առանց գյուղացիների և բանվորների լայն մասնակցութիւն: Այդ հանգամանքը Կոմյերիտմիութիւնը պարտավորեցնում է ընդգրկել բանվորական և գյուղացիական յերիտասարդութիւն վորքան կարելի յե լայն խավեր:

Կուսակցութիւնը չի կարող ընդգրկել այդպիսի լայն խավեր, վորովհետև նա հանդիսանում է առաջնորդող, ղեկավարող կազմակերպութիւն: Կուսակցութիւնը էր շարքերում պետք է վերցնի բանվորների և գյուղացիների միայն այն մասը, վոր բավականաչափ թրծված է և ղեկավարութիւն համար պատրաստված: Կոմյերիտմիութիւն առաջ այդպիսի խոչընդոտներ չկան: Նա, հանգիստանալով դպրոց, կարող է և պետք է իր շարքերում առնի յերի-

տասարդութիւն նաև այն մասը, վորը կարիք ունի վերադաստիարակութիւն, վերապատրաստութիւն:

Կոմյերիտմիութիւնը Կոմունիստական կուսակցութիւն նախապատրաստական դպրոցն է, ուստի և նրա ու կուսակցութիւն միջև պետք է շատ սերտ կապ լինի: Կոմյերիտմիութիւնը իր աշխատանքի մեջ կուսակցութիւն վրա պետք է նայի վորպես ավագ ղեկավարի և ոգնականի վրա:

Դա յերբեք չի նշանակում, վոր Կոմյերիտմիութիւնը զրկված է ինքնուրույն գործելուց: Ընդհակառակը, կուսակցութիւնը ինքը շահագրգռված է, վոր յերիտասարդութիւնը Կոմունիստական Միութիւն մեջ աշխատելով սովորի կազմակերպված և կոլլեկտիվ կերպով գործել: Ահա թե ինչու կուսակցութիւնը յերբեք չի խառնվում Կոմյերիտմիութիւն կազմակերպչական գործերում, Կոմյերիտմիութեանական զանազան կոմիտեաների ընտրութիւններին, համագումարներ անցկացնելու խնդրում և այլն: Բայց կուսակցութիւնն ուշադրութիւնը հետևում է, թե ի՞նչպես է կատարվում դաստիարակչական աշխատանքը Կոմյերիտմիութիւն անդամների շրջանում, ինչպե՞ս են մշակվում ու ըմբռնվում ընկ- Լենինի ուսմունքի հիմնական հարցերը, ի՞նչ չափով են ըմբռնվում կուսակցութիւն համագումարների, կուսակցական խորհրդակցութիւնների, Կենտրոնական Կոմիտեյի բոլոր վորոշումները: Դրա համար՝ կուսակցութիւնը իր անդամներին կցում է Կոմյերիտմիութիւն բջիջներին, զեկուցողներ է ուղարկում Կոմյերիտմիութիւն համագումարներին ու խորհրդակցութիւններին, Կոմյերիտմիութիւն շարքերումն է թողնում յերիտասարդ կուսակցականներին: Ներկայումս կոմունիստների թիվը Կոմյերիտմիութիւն մեջ ղեռ ևս մեծ չէ: Յուրաքանչյուր 100 կոմյերիտականին ընկնում է 9 կոմունիստ: Ուստի և առանձնապես կարևոր է, վորպեսզի Կոմ-

յերիտմիությունը վորքան հնարավոր է շատ սերտ կապ-  
ված լինի կուսակցության հետ, վորչափ կարելի յե ավելի  
լրիվ ղեկավարություն ստանա նրանից:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ կոմյերի-  
տականի գաստիարակության համար՝ միայն գերբը բավա-  
կան չե:

Ինչո՞ւ կոմյերիտմիությունը պետք է ձգտի ընդգրկել  
բանվոր և գյուղացի յերիտասարգների վորքան կարելի յե  
մեծ թիվ:

Ի՞նչպիսի փոխհարաբերություններ պետք է լինեն կու-  
սակցության և կոմյերիտմիության միջև:

**ԻՆՉՊԵՍ Ե ԱՃՈՒՄ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ.**

Կոմյերիտմիության քանակական կազմը ցույց է տա-  
լիս, վոր նրան արդեն հաջողվել է ընդգրկել բանվորա-  
գյուղացիական յերիտասարգության մասսաները: ՀԼԿՅԵՄ  
VII Համագումարի ժամանակ (1926 թ. սկզբում) ամբողջ  
Սորհրդային Միության մեջ հաշվում եր ավելի քան մեկ  
միլիոն յոթ հարյուր հազար կոմյերիտական: Մինչդեռ  
Կոմյերիտմիության նախընթաց համագումարի ժամանակ  
կար ընդամենը 822 հազար: Կոմյերիտմիության առաջին  
համագումարին (1918 թ.) ներկա եյին միայն 22 հազարի  
կողմից ուղարկված պատգամավորներ: Այդպիսով ութը  
տարվա ընթացքում Միությունը աճել է ավելի քան  
77 անգամ:

Կոմյերիտմիության աճումը տեղի յե ունենում և՛  
բանվորական, և՛ գյուղացիության յերիտասարգության  
ըջանում: VII Համագումարի ժամանակ Կոմյերիտմիու-  
թյան շարքերում կային բանվորներ (բատրակների հետ  
միասին)՝ 697.000, իսկ գյուղացիներ՝ 713 հազարից ավելի:  
Մյուսները, այսինքն աշակերտները և ծառայողները կազ-  
մում եյին բոլոր կոմյերիտականների թվի վոչ ավել մեկ  
տասնյերորդական մասը:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր կոմյերիտմիու-  
թյունը իր գերակշռող մասով կազմված է բանվորական  
և գյուղացիական յերիտասարգությունից, և վոր գյուղա-  
ցիական մասը նույնիսկ մի քիչ ավելի յե: Այդ վերջին հան-  
գամանքն ապացուցում է, վոր գյուղի յերիտասարգության  
հասունացած մասը սիրով է մտնում կազմակերպության  
մեջ, ցանկանում է հասարակական աշխատանքի փորձ և  
ունակություններ ձեռք բերել: Անհրաժեշտ է միայն ճշգ-  
րել, վոր կոմյերիտական կազմակերպությունները գյու-  
ղում բավականաչափ ուժեղ և դիսցիպլինայի վարժված  
լինեն, վորպեսզի նրանցից յուրաքանչյուրն ըմբռնած լինի,  
թե ինչ է կոմունիզմը, վորպեսզի նրանցից յուրաքան-  
չյուրը սովորի հասարակական գործնական աշխատանք տա-  
նել: Գյուղում դա մեծ մասամբ վատ է հաջողվում. չկան  
լավ ղեկավարներ, չկան գրքեր. կոմյերիտականները չգի-  
տեն թե ինչպես գործի ձեռնարկեն, չգիտեն ինչ անեն:  
Այդ դեպքում ոգնության են գալիս կոմյերիտմիության  
բանվորական կազմակերպությունները: Քաղաքում կոմ-  
յերիտականները հեշտությամբ են ձեռք բերում հարկա-  
վոր գիտելիքներ, հեշտությամբ են սովորում աշխատել:  
Ահա թե ինչու կոմյերիտմիության քաղաքային մասը  
պետք է գյուղական բլիջներին ոգնե, նրանց համար փորձ-  
ված աշխատողներ տա, աշխատանքի մեջ աջակցե:

Գյուղական կոմյերիտականները իրենց հերթին պետք  
է անեն ամեն ինչ, վորպեսզի կոմյերիտմիութեանական  
բանվորական բլիջների հետ կապ պահպանեն և այդ կապը  
ամրացնեն. դրանով կըյուրացվի փոխադարձ հասկացողու-  
թյունը բանվորների և գյուղացիների, կամրապնդվի բան-  
վորների և գյուղացիների միությունը, վորը Սորհրդային  
իշխանության հիմքն է հանդիսանում:

Կոմյերիտմիությունը ձգտում է ընդգրկել բանվորա-  
կան ամբողջ յերիտասարգությունը. կոմյերիտմիությունը

աշխատում ե, վոր իր շարքերը մտնեն չքավոր գյուղացիութեան, ինչպես նաև միջակ գյուղացիութեան, լավագույն մասը: Կոմյերիտմիութիւնը ձգտում է առաջին հերթին իր շարքերում առնել բատրակներին և չքավորներին: Գյուղացի յերիտասարդութեան այդ մասը իր շահերով կապված է պրոլետարիատի հետ և Կոմյերիտմիութեան գլխավոր նեցուկն է կազմում գյուղում: Բայց Կոմյերիտմիութիւնը նույնպես շահագրգռված է՝ միջակ գյուղացիութիւնից դուրս յեկած յերիտասարդներին ևս իր կազմակերպութեան մեջ առնելու: Յերիտասարդութեան այդ խավերը, Կոմյերիտմիութեան գործ դրած դաստիարակչական համառ աշխատանքին յենթարկվելուց հետո գյուղում կկազմեն սոցիալիզմի շինարարների հիմնական կորիզը: Ներկայումս կոմյերիտականների յերկու յերրորդական մասը կազմում են չքավորները: Այդ բավական պարզ ցույց է ապլիս, թե գյուղում Կոմյերիտմիութիւնն ունի ե ընդունում իր շարքերը:

Կոմյերիտմիութիւնը իրենից միանգամից վանում է կուլակային տարրերին, առուծախսով զբաղվող յերիտասարդներին, վորպես սոցիալիզմին թշնամի ելեմենտներ:

Ծառայող և սովորող յերիտասարդութեանը Կոմյերիտմիութիւնը մեծ գգուշութեամբ է ընդունում, ուշադիր ընտրութիւն կատարելով: Այդպիսիների համար սամանված են առանձին յերաշխավորութիւններ, փորձութեան ժամկետ՝ յերը ընդունվածը համարվում է թեկնածու և վճռողական ձայնի իրավունք չունի: Միութիւնը ձգտում է, վոր իր շարքերը մտնեն ծառայող և սովորող յերիտասարդութեան միայն լավագույն ներկայացուցիչները, վորոնք ամբողջովին և լիովին անցել են պրոլետարիատի կողմը և իրենց անձնվիրութիւնը գործով բավականաչափ ապացուցել են:

Կոմյերիտմիութիւնը չի սահմանափակվում նրանով, վոր նա հետզհետե ավելի ու ավելի յե ընդգրկում յերիտասարդութեան նորանոր խավեր: Նա ձգտում է իր յետևից տանել գյուղական ամբողջ յերիտասարդութեանը, վորն առայժմ մնում է անկուսակցական: Այդ խնդրով է զբաղվում Կոմյերիտմիութեան այսպես ասած մասսայական աշխատանքը գյուղում — խրճիթ - ընթերցարաններում, ակումբներում, նորակոչների շրջաններում և այլն: Կոմյերիտմիութիւնը ձգտում է անկուսակցական յերիտասարդութիւնը շահագրգռել հասարակական աշխատանքով, լրագրով, գրքով, նա ձգնում է, վոր կուսակցութեան բոլոր վորոշումները նրան հայանի և հասկանալի լինեն: Այդպիսով Կոմյերիտմիութիւնը նպաստում է կուսակցութեան՝ անկուսակցական գյուղացիութեան հետ ունեցած կապին և հենց դրանով կատարում է իր հիմնական խնդիրներից մեկը:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ ցանկալի յե, վոր բանվոր - կոմյերիտականները հաճախ այցելեն գյուղական բջիջները և այնտեղ աշխատանք տանեն:

Ինչո՞ւ կարևոր է Կոմյերիտմիութեան մեջ առնել վորքան կարելի յե շատ բատրակներ:

Ի՞նչպիսի միջոցներով Կոմյերիտմիութիւնը կարող է անկուսակցական յերիտասարդութեան վրա ազդեցութիւն ձեռք բերել:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԱՊԱՀ ԳՈՒՆԴԻՆ Ե.

Մենք արդեն գիտենք, թե մեր յերկրում ինչպես է կառուցվում սոցիալիզմը, թե ինչպիսի մեծ դժվարութիւններ են ստիպված լինում հաղթելու բանվորներն ու գյուղացիները՝ առորյա գործնական աշխատանքում: Դրա համար կոմյերիտականները նախ իրենք պետք է որինակ ցույց տան, թե ինչպես պետք է պայքարել այդ դժվարութիւնների դեմ: Այսպես, որինակ՝ Ոորհուրդների աշ-

խատանքում մասնակցող իրենց ընտրված ներկայացուցիչներին միջոցով, Կոմյերիտմիությունը պետք է պայքարե խորհրդային ապարատներում գոյություն ունեցող ամեն տեսակ ձգձգումների, կոպիտ վարեցողության դեմ, պետք է գյուղացիներին բացատրե Իշխանության բարձր որդանների դրած խորհրդային որենքները: Կոմյերիտմիության բջիջները գյուղում պետք է անխնա մերկացնեն խորհրդային որդաններում կաշառակերությունը, չարարկությունները, դրանց դեմ պայքարելով կուսակցական կազմակերպությունների և համապատասխան հիմնարկությունների միջոցով, այն ե՛լ բանվորա-գյուղացիական վարչության, դատախազության միջոցով: Կոմյերիտականները Խորհուրդների միջոցով պետք է ձգտեն միջոցներ հատկացնելու կուլտուրական աշխատանքների համար, նրանք պետք է իրենց կազմակերպության ուժերով ոգնեն դրարոցի շենքը կարգի բերելու, մանկամսուրներ, մանկապարտեզներ հիմնելու: Հազվագյուտ չեն այնպիսի դեպքեր, յերբ Կոմյերիտմիության բջիջը նախաձեռնում է այնպիսի աշխատանքների, ինչպիսին են՝ կամուրջներն ու ճանապարհները կարգի բերելը, հացաբույսերի փաստուտների դեմ պայքարելը և այլն: Յեւ այսպիսի մանր գործերը գյուղացիներին մերձեցնում են Կոմյերիտմիության հետ, իսկ վերջինիս միջոցով՝ կուսակցության հետ, ոգնում են սոցիալիստական շինարարությանը:

Բայց սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրը, ինչպես մենք գիտենք, մեր ամբողջ տնտեսությունը վերակառուցելու մեջ է կայանում: Ահա թե ինչու Կոմյերիտմիությունը և ամբողջ բանվորական յերիտասարդությունը ցույց են տալիս և պետք է ամենագործնական մասնակցություն ցույց տան արդյունաբերության ուժեղացման և զարգացման գործում: Կոմյերիտմիությունը պայքարում է վատնումների դեմ, գործիքների և նյու-

թերի նկատմամբ ցույց տված անփույթ վերաբերմունքի դեմ, այն ամենի դեմ, ինչ փաստում է արդյունաբերությանը, ինչ արգելք է հանդիսանում աշխատանքի ամե. նաբարձր արտադրողականությանը: Կոմյերիտականները պայքարում են նաև այն բոլոր ավելորդությունների և շռայլությունների դեմ, վորոնք ապրանքի գինը բարձրացնում են: Կոմյերիտմիությունը բանվորական յերիտասարդությանը սովորեցնելով խնայողություն անել և գիտակից վերաբերմունք ունենալ դեպի արտադրությունը, դրանով Կոմյերիտմիությունն ոգնում է արդյունագործության բարձրացման միջոցների ավելացմանը մեր յերկրում:

Կոմյերիտմիությունը գյուղում պետք է ոգնի տընտեսական աշխատանքին: Գյուղի կոմյերիտականը միշտ պետք է լինի առաջավոր տնտեսարար, պետք է գործադրե ցանքսի, անասուններ խնամելու ամենալավ ձևերը և այլն: Կոմյերիտականները գյուղում պետք է ձգտեն կազմել զանազան արտեղներ, ընկերություններ և տեղական կոոպերատիվի ամենագործունյա անդամները պիտի լինեն: Իր կենցաղի մեջ, իր ընտանեկան կյանքում կոմյերիտականը պետք է որինակ ծառայի, թե ինչպես պետք է կառուցել նոր կյանքը: Այստեղ առաջին տեղը պիտի բռնի պայքարը կրոնական նախապաշարմունքների դեմ, պայքարն ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսին ճնշելու դեմ: Կոմյերիտականի խրճիթում պետք է մաքրություն և կարգ ու կանոն լինի:

Պետք է համոզված լինել, վոր մենք դիմում ենք դեպի լուսավոր և փայլուն սպազա. այդ ճանապարհին դեռ յերկա՛ր, յերկա՛ր պետք է աշխատել, իսկ այդ աշխատանքի մեջ կոմյերիտականները պետք է առաջին տեղերում լինեն:

ՀԱՐՑԵՐ՝ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Կոմյերիտականները գյուղում ի՞նչպես պիտի պայքարեն առանձին աշխա-

տողները զանազան չարարկությունները դեմ, խորհրդային հիմնարկություններում տիրող ձգձգումների դեմ:

Ֆաբրիկաներում և գործարաններում կոմյերիտմիությունը ի՞նչ կերպ է ոգնում միջոցների խնայողություն անել մեր յերկրի արդյունագործության համար:

Ի՞նչպես պետք է լինի գյուղի կոմյերիտականը իր տնտեսության մեջ:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ:

Կոմյերիտմիությունը վոչ միայն մասնակցում է ընդհանուր շինարարական աշխատանքում, այլ և նա հետեւում է, վոր յերիտասարդությունը առողջ մեծանա, լուսավորված լինի:

Իրա համար էլ կոմյերիտմիության ներկայացուցիչները մասնակցություն են ունենում խորհրդային և պրոֆեսիոնալ աշխատանքի այն բոլոր բաժիններում, վորոնք անմիջականորեն զբաղվում են յերիտասարդության շահերի խնդիրներով: Այսպես, որինակ՝ կոմյերիտմիությունը հետևում է, թե ինչ չափով են կիրառվում բանվորական և բատրակային յերիտասարդության իրավունքները:

Բոլոր բանվորների և բատրակների իրավունքների ընդհանուր պաշտպանությունն ընկնում է առաջին հերթին պրոֆեսիոնալ միությունների վրա, իսկ այնուհետև աշխատանքի բաժինների վրա: Խորհրդային Միությունը հրատարակել է այնպիսի որենքներ, վորոնք յերիտասարդության աշխատանքը պաշտպանում են, մատաղ սերնդի առողջությունը պաշտպանում են: Այդպիսի նպատակով բանվորական որը յերիտասարդի համար սահմանված է ավելի պակաս, քան չափահասի համար է. բանվոր-յերիտասարդին արգելված է աշխատել այնպիսի արդյունաբերությունների մեջ, վորոնք կարող են վնասել նրա մատաղ որգանիզմը:

Արդյունաբերության համար նոր պատրաստված բանվորներ ունենալու նպատակով, համապատասխան ձեռնարկությունը պարտավոր է յերիտասարդները վորոշ թիվ ընդունել՝ նրանց պատրաստելու համար, այսինքն ձեռնարկությունների մեջ պետք է լինեն՝ բանվորների ընդհանուր քանակին համապատասխան՝ սովորող յերիտասարդներ: Բանվոր յերիտասարդների համար սահմանված է աշխատավարձի հատուկ չափ, վոր նրանց ապրուստը ապահովում է:

Պետական ձեռնարկություններում այդ բոլոր վորոշումները կարող են խախտվել՝ շնորհիվ դեկավարների անկարողության կամ չգիտության: Բայց մասնավոր ձեռնարկություններում տերերը աշխատում են այդ վորոշումները անզիտանալ և դրանց կողքովը անցնել: Ահա թե ինչու կոմյերիտմիությունը պրոֆեսիոնալ միությունների և աշխատանքի բաժինների աշխատանքներին մասնակցելով, ուշադիր հետևում է, վոր այդ կարգերը պահպանվեն: Ավելի դժվար է պաշտպանել իրավունքները չբավոր յերիտասարդության, վորն ամբողջությամբ չի մտնում «Հողանտառ» աշխատավորների պրոֆեսիոնալ միության մեջ: Մինչդեռ բատրակային յերիտասարդության թիվը հասնում է միլիոնի: Կուլակները ամեն կերպ ձնշում են բատրակներին: Կոմյերիտմիությունը պրոֆեսիոնալ միությունների և խորհրդային որգանների ոգնությամբ ձրգնում է բատրակների համար ապահովել աշխատավարձի հաստատուն չափ և, ըստ հնարավորության, պայմանագրերի միջոցով վորոշակի դարձնել հարաբերությունները բատրակների և նրանց տերերի միջև: Պայմանագրերը հնարավորություն են տալիս ստուգելու բատրակների աշխատանքի պայմանները և հողալու, վոր նրանց չշահագործեն: Ահա թե ինչու գյուղում կոմյերիտմիության աշխատանքի կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսա-

նում՝ «Հողանտառ» աշխատավորների միության մեջ առ-  
նել բատրակային յերիտասարդությունը և այդ միության  
աշխատանքներն ուժեղացնել:

Կոմյերիտմիությունը մեծ նախաձեռնություն է ցույց  
տվել յերիտասարդության նաև լուսավորության գործում:  
Կոմյերիտմիության ամենաակտիվ մասնակցությամբ, Խոր-  
հրդային իշխանությունը յերիտասարդ բանվորների հա-  
մար կազմակերպել է հատուկ դպրոցներ՝ գործարաններին  
կից: Այդ դպրոցներում բանվորական յերիտասարդու-  
թյունը դաստիարակվում և պատրաստվում է այնպես,  
վոր հետո գործարան է մտնում վոչ միայն ինչպես վո-  
րակցալ, այլ և հասարակական աշխատանքի տեսակետից  
ակտիվ բանվոր: Այդպիսի դպրոցներ ամբողջ Խորհրդային  
Միության մեջ մենք ունենք 954 հատ: Այդ դպրոցներում  
աշակերտության թիվը հասնում է 100,000-ի:

Գյուղում՝ Կոմյերիտմիության նախաձեռնությամբ՝  
այժմ հիմնվում են հատուկ դպրոցներ գյուղացիական  
յերիտասարդության համար: Այդպիսի դպրոցների թիվը  
1000-ից անց է: Բայց յեթե համեմատելու լինենք բանվո-  
րական յերիտասարդության և գյուղացիական յերիտա-  
սարդության քանակը, կտեսնենք, վոր գյուղացիական  
յերիտասարդության համար կառուցված դպրոցների թիվը  
շատ աննշան է:

Գյուղացիական յերիտ. դպրոցների նպատակն է պատ-  
րաստել գյուղական առաջավոր տնտեսարար, վորը կա-  
րողանա աշխատել ուրիշների հետ միացած, վորը կարո-  
ղանա լինել կոոպերացիայի ակտիվ անդամ, գյուղական  
տնտեսավարության նոր յեղանակների հաղորդիչ: Գյուղ-  
յերիտ դպրոցները մինչև ընթացավարտներ (ուսյալ տըն-  
տեսավարներ) տալը, հանդիսանում են գյուղատնտեսա-  
կան գիտելիքների անկարաններ և արտելային աշխատանքի  
կենտրոններ: Հասկանալի յե, իհարկե, վոր այդ դպրոց-

ներում սովորում են մեծ մասամբ բատրակները, չքավոր-  
ները, իսկ այնուհետև՝ միջակները: Կուլակների յերեխա-  
ները կազմում են հազվագյուտ բացառություններ—հա-  
զարից մի մարդ, իսկ չքավորները, բատրակները և բան-  
վորները կազմում են կեսից ավելին: Գյուղացիական դպ-  
րոցներից դուրս մնացած յերիտասարդների շրջանում,  
ինչպես նաև չափահաս գյուղացիների շրջանում, գյուղա-  
տնտեսական գիտելիքները տարածվում են գյուղա-տնտե-  
սական կրթողների միջոցով:

Բացի դրանից, Կոմյերիտմիության ոգնությամբ  
գյուղում կազմակերպվում են կուրսեր՝ չափահասների  
համար, դպրոցներ՝ պատանիների համար: Գյուղում կան  
նաև պրոֆեսիոնալ տեխնիկական դպրոցներ և արհեստա-  
նոցներ: Այս կրթական հիմնարկությունների թիվը, իհարկե,  
առայժմ շատ սահմանափակ է և դրանք գոյություն  
ունեն միայն կենտրոնական վայրերում: Սակայն ջանքեր  
են գործ դրվում, վոր նման դպրոցների ցանցը հետզհետե  
ըստ կարելույն լայնացվի:

Վերջապես՝ Կոմյերիտմիությունը ոգնում է գյուղա-  
ցիական յերիտասարդությանը՝ ընդունվելու բանֆակները  
և բարձրագույն դպրոցները: 1925—26 թվին բանֆակնե-  
րում ընդունված են 11,800 գյուղացի, վոր կազմում է  
բոլոր ընդունվածների համարյա կեսը: Գյուղատնտեսա-  
կան բարձրագույն դպրոցներում գյուղացիները կազմում  
են 42%, իսկ մյուսներում՝ 28%:

Կոմյերիտմիության գլխավոր խնդիրն առհասարակ  
հանդիսանում է՝ պայքարել լուսավորության համար:  
Ընկ. Լենինն ասում էր, վոր Կոմյերիտմիության նպա-  
տակը պետք է լինի՝ «սովորել, սովորել և սովորել»:  
Այս ուսումը պետք է սերտ կապված լինի կյանքի հետ,  
և մենք տեսանք, թե ինչպես Կոմյերիտմիությունը ամուր  
կապված է մեր յերկրում տարվող ամբողջ պայքարի և

ինարարութեան հետ: Բայց միայն մասնակցութիւն ունե-  
շնալը պայքարում և շինարարութեան մեջ՝ բավական  
չէ: Ընկ. Լենինը նույնպէս ասում էր, վոր կոմու-  
նիստը պետք է յուրացնի այն բոլոր գիտելիքները, վոր  
կուտակել է մարդկութիւնը: Իսկ դրա համար անհրաժեշտ  
է ուսանել՝ այդ բառի ուղղակի իմաստով: Թե այդ  
ուսումը ինչքան է անհրաժեշտ, այդ յերևում է թեկուզ  
հետևյալ թվերից.

Կոմյերիտմիութեան մեջ 1926 թվի սկզբին կար  
80.000 անգրագետ, մեծ մասամբ գյուղացիական յերի-  
տասարգութեան թվից: Անգրագետների շատ ավելի մեծ  
թիվ է տալիս անկուսակցական յերիտասարգութիւնը:  
Ահա թէ ինչու կոմյերիտմիութիւնը ուժեղ աշխատանք է  
տանում անգրագիտութիւնը վերացնելու վոչ միայն յե-  
րիտասարգութեան շրջանում, այլ և չափահասների շրջա-  
նում: Այդ աշխատանքը նա տանում է «Կորչի անգրագի-  
տութիւնը» ընկերութեան ոգնութեամբ, վորի ակտիվ ան-  
դամը պետք է լինի ամեն մի կոմյերիտական:

Կոմյերիտմիութեան լուսավորութեան ու քաղաքական  
կրթութեան գործին են ծառայում Կոմյերիտմիութեան  
նաև լրագրներն ու ժուրնալները: Կոմյերիտմիութիւնը  
ավելի քան 150 անուն լրագիր ու ժուրնալ է լույս ընծայում,  
վորոնք ունեն հարյուր հազարավոր ընթերցողներ և տաս-  
նյակ հազարավոր թղթակիցներ: Մատաղ թղթակիցներն  
հանդիսանում են բանվորա-գյուղացիական յերիտասար-  
գութեան ակտիվ, առաջավոր մասը, վորը և՛ դաստիարակ-  
ված, և՛ առաջ է քաշված հենց այդ մամուլի միջոցով:

ՀԱՐՅԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ է արվում  
քաղաքներում բանվորական յերիտասարգութեան աշխա-  
տանքի պաշտպանութեան համար:

Ինչո՞ւ Կոմյերիտմիութիւնը պետք է ձգտի, վոր բոլոր  
բատրակները մտնեն «Հողանտառ» աշխատավորների միու-  
թեան մեջ:

Ինչո՞ւ համար են հիմնվում գյուղյերիտ. դպրոցներ:  
Ինչո՞ւ Կոմյերիտմիութիւնը էր գլխավոր անելիքներից  
մեկը համարում է անգրագիտութեան վերացումը:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏ-  
ՄԻՈՒԹՅԱՆԸ ՓՈՆԱՐԻՆՈՂՆԵՐԸ.

Կոմյերիտմիութիւնն ի վիճակի չէր լինի իր նպա-  
տակներն իրագործելու, յեթէ կոմյերիտականների ամբողջ  
մասսան նրա աշխատանքում մասնակցութիւն չունենար:  
Կոմյերիտմիութեան մեջ չպետք է լինեն այնպիսի ան-  
դամներ, վորոնք միութենական պարտականութիւններ  
ստանձնած չլինեն: Սակայն աշխատանքի ընթացքում  
ջոկնվում է ավելի ընդունակ, ավելի հաջող աշխատանք  
կատարող ընկերների մի մասը, ուստի և դրանք ավելի  
աշխատանք են տանում, քան մյուսները: Յեւ հենց դրանք  
կազմում են Կոմյերիտմիութեան ակտիվը:

Կոմյերիտմիութեանական աշխատանքի հաջողութիւնը  
շատ բանում կախված է այն հանգամանքից, թէ վորքան  
է ընդունակ Կոմյերիտմիութեան ակտիվը: Ուստի և Կոմ-  
յերիտմիութիւնը ձգտում է իր շարքերից առաջ քաշել  
բավականաչափ մեծաթիվ, պատրաստված ու տոկուն ակ-  
տիվ: Կոմյերիտմիութիւնը, որինակ, ոգնելու համար գյուղ  
է ուղարկում քաղաքային իր լավ աշխատողներին: Այս-  
պէս, որինակ, 1925 թվի հունվարին քաղաքից գյուղ  
ուղարկվեցին 1378 կոմյերիտական աշխատողներ: Նույն  
թվի աշնանը կրկին ուղարկվեցին 1350 աշխատողներ:

Բայց քաղաքը գյուղին այդքան աշխատավորներ,  
ինարկէ, միշտ չի կարող տալ: Ուստի և Կոմյերիտմիու-  
թիւնը գյուղական աշխատողների համար կազմակերպում  
է զանազան կուրսեր, նրանց ուղարկում է խորհրդային-  
կուսակցական դպրոցներ և այլն:

Ակտիվը պետք է շատ սովորի՝ ձգտելով ընդառաջ գնալ  
յերիտասարդության պահանջներին: Ակտիվը վոչ թե պիտի  
հրամանատարությունն անի, այլ պետք է ղեկավարի, իսկ  
այդ անկարելի յե առանց բավականաչափ գիտելիքներ  
ձեռք բերելու:

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ.

Կոմյերիտականը ինքը հանդիսանալով կոմունիստներին  
փոխարինող, պետք է իր համար ևս փոխարինող-  
ներ պատրաստե: Այդ—պատանի պիոներների կազմակեր-  
պությունն է: Պատանի պիոներների կոլլեկտիվները, վո-  
րոնք կազմակերպվում են գործարաններին կից և գյու-  
ղերում, հենց մանկական հասակից կոմունիզմի վոգով են  
դաստիարակվում: Պիոներական կոլլեկտիվներում աշխա-  
տանքը տարվում է այն ուղղությամբ, վորպեսզի յերե-  
խաների մեջ գարթեցնել հետաքրքրությունն ղեպի հասա-  
րակական գործը, ղեպի հեղափոխության խնդիրները. այդ  
կոլլեկտիվներում տարվող աշխատանքը յերեխաներին դաս-  
տիարակում է ցանկալի վոգով, պատրաստում է առողջ,  
աշխույժ սերունդ, ոգնում է ղպրոցին՝ ուսուցման գործում:

1926 թվի սկզբին ամբողջ Խորհրդային Միության  
մեջ կար 38.000 կոլլեկտիվ, վորոնց մեջ պիոներների  
թիվն էր՝ 1.600.000:

Պիոներական յուրաքանչյուր կոլլեկտիվ կապված է կոմ-  
յերիտական բլի՛՛լի հետ: Կոմյերիտիությունը ղեկավարող  
ցուցմունքներ է տալիս պիոներական աշխատանքը տա-  
նելու և իր միջից աշխատողներ է տալիս՝ պիոներներին  
ոգնելու համար:

Պիոներական բոլոր կոլլեկտիվներից 24.000-ը գտնվում  
է գյուղում: Այդ, իհարկե, քիչ է ամբողջ բանվորա-գյու-  
ղացիական մանկտին ընդգրկելու համար: Այդպիսով, հե-  
տգհետե, նորանոր սերունդների աճմանը ղուզընթաց,

կաճի նաև սոցիալիզմի շինարարությանը ակտիվ մասնակ-  
ցողների քանակը, մինչև վոր այդ շինարարությունը վեր-  
ջապես, կընդգրկի ամբողջ աշխատավորությունը: Պիո-  
ներների անմիջական ղեկավարն է հանդիսանում Կոմյե-  
րիտիությունը: Բայց կուսակցությունը նույնպես ուշա-  
դրությամբ հետևում է պիոներական շարժմանը և տալիս  
է իր ցուցմունքները: Ամեն անգամ, յերբ կուսակցու-  
թյունը քննում է Կոմյերիտիության աշխատանքի հար-  
ցերը, նա առանձին ուշադրությամբ կանգ է առնում պիո-  
ներական շարժման վրա:

Այսպիսով, պիոներական շարժումն ևս կազմում է կո-  
մունիստական ընտանիքի մի մասը: Այդ ընտանիքի բոլոր  
մասերի աշխատանքը կապված է ընկ. Լենինի պատգամ-  
ներին միասնորեն յենթարկվելու և մեր յերկրում ու  
ամբողջ աշխարհում սոցիալիզմ կառուցելու ձգտումի հետ:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ Կոմյերիտ-  
իությունը պետք է ունենա իր ակտիվը:

Ինչո՞ւ հարկավոր են պիոներական կոլլեկտիվները:

ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԿԱՐԴԱՅԱԾԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Հաշվեցե՛ք բոլոր անգրագետ կոմյերիտականներին  
և ձմեռվա ընթացքում նրանց ղրագիտություն սովորեցրե՛ք՝  
ամեն մի անգրագետին աջակից տալով մի գրագետ կոմյե-  
րիտական: Այնտեղ, ուր կան անգրագիտության վերացման  
կայաններ, ստիպեցե՛ք անգրագետ կոմյերիտականներին հա-  
ճախել այդ կայանները, հետևեցե՛ք նրանց ուսմանը:

Կապ հաստատեցե՛ք մոտակա գյուղյերիտ ղպրոցի  
հետ: Նրանից խորհուրդ հարցրե՛ք, թե ինչպես պետք է լավա-  
գույն յեղանակով վարել տնտեսությունը:

Կարդացե՛ք և վերլուծե՛ք Լենինյան Կոմյերիտիութ-  
յան կանոնադրությունը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ.

Ի՞նչօրէս ՅԵՎ ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԵՅ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ.

Կարմիր բանակում մեր յերիտասարդներին կրթում-վարժեցնում են, վորպեսզի պատերազմի դեպքում նրանք պատրաստ լինեն: Հարցը միայն հետևյալումն է՝ թե ո՞ւմ դեմ պետք է կռվեն և ինչու համար:

Բուրժուական յերկրները բանակները ծառայում են բուրժուազիայի համար: Նրանք պատերազմ են մղում իրար դեմ, վորպեսզի մի յերկրի բուրժուազիան կարողանա ավելի շատ կողոպտել, քան մյուսին: Բացի այդ, յերբ աշխատավորութիւնը ապստամբում է, բանակի միջոցով բուրժուազիան նրան խեղդում է: Յեթե աշխատավորութիւնը կամենում է կապիտալիստների լծից ազատվել, բուրժուազիան նրա դեմ դուրս է բերում իր զինված բանակը: Կարմիր բանակը բոլորովին այլ նպատակ ունի: Նա պաշտպանում է թույլ ժողովուրդներին, բոլոր աշխատավորութիւնը: Կարմիր բանակի միջոցով Խորհրդային իշխանութիւնը միջազգային բուրժուազիայի դավերից պաշտպանվում է:

Հեղափոխութիւն 9 տարիների ընթացքում Կարմիր բանակը ցույց տվեց, վոր նա ամուր է, հավատարիմ է և

կարող է պետք յեղած դեպքում Խորհրդային իշխանութիւն իրավունքները պաշտպանել: Յե՛վ այն էլ ի՞նչպես պաշտպանել:

Կարմիր բանակը կազմվեց նրա համար, վորպեսզի կռվի Ռուսաստանի և արտասահմանի կապիտալիստների ու կալվածատերերի դեմ: Այդ կռվի մեջ Կարմիր բանակն ուժեղացավ և ամրացավ: Հեղափոխութիւնն առաջին որերին մենք Կարմիր բանակ չունեցինք: Հեղափոխութիւնն առաջին որերին կազմակերպվեց վոչ թե Կարմիր բանակ, այլ Կարմիր գվարդիա:

Ահա թե ինչպես դա առաջ յեկավ:

Ինչպես մեզ հայտնի է, 1917 թվի փետրվար ամսին, յերբ ցարի իշխանութիւնը տապալվեց, բուրժուազիան իր ձեռքն առավ իշխանութիւնը: Բանվոր դասակարգը չէր կարող համաձայնվել այդ փաստի հետ: Բանվոր դասակարգն սկսեց պատրաստվել բուրժուազիայի դեմ պայքարելու: Կոմունիստական կուսակցութիւնն սկսեց կազմակերպել բանվորական խմբեր, խմբակներ: Այդ խմբերն էյին, վոր կոչվում էյին Կարմիր գվարդիա:

Կարմիր գվարդիայի խմբերի թիվը շատացավ այն ժամանակ, յերբ իշխանութիւնն անցավ բանվորների և գյուղացիների ձեռքը:

Կարմիր գվարդիան Կոմունիստական կուսակցութիւնն առաջնորդութիւնով հերոսաբար պաշտպանում էր յերիտասարդ Խորհրդային իշխանութիւնը: Բայց լավ կազմակերպված Սպիտակ բանակների դեմ կռվելու համար հարկավոր էյին մշտական և զորեղ բանակներ: Այդ ստիպեց Խորհրդային իշխանութիւնը անցնել մշտական բանակ կազմակերպելու գործին:

Կարմիր բանակի կազմակերպման գեկրետը հրատարակվեց 1918 թվի փետրվարի 23-ին: Այդ պատճառով

ել ամեն տարի փետրվարի 23-ին մենք տոնում ենք Կարմիր բանակի կազմակերպման տոնը:

Այդ դեկրետի համաձայն, Կարմիր բանակը կազմակերպվում էր ամենագիտակից բանվորներից և գյուղացիներից, վորոնք կամավոր կերպով կուղեյին լինել Կարմիր բանակային: Պարզ է, վոր Կարմիր զվարդիայի խմբերն անցան Կարմիր բանակի շարքերը: Այդպիսով, կարճ ժամանակի ընթացքում, կազմվեց Կարմիր բանակը, վոր 200,000 զինված կուվող բանվոր և գյուղացի ուներ իր շարքերում:

Պատերազմն ընդունում էր լուրջ բնույթ: Կամավորներից բաղկացած բանակը չէր կարող լավ զինված և վարժ թշնամու հետ պատերազմել: Խորհրդային իշխանութիւնը ստիպված յեղավ հայտարարել՝ զինվորական ծառայութիւնը բանվորների և գյուղացոց համար պարտադիր:

Այսպես, Խորհրդային իշխանութիւնը սպառնացող վտանգի զարգացմանը զուգընթաց, զարգացավ, գորեղացավ մեր Կարմիր բանակը: Կոմունիստական կուսակցութիւնը, վոր հիմնեց Կարմիր բանակը, դեկավարում է, պետք յեղած ժամանակը Կարմիր բանակի շարքերն ուժեղացնում նորանոր կուսակցականներով, շարունակ աջակուրջ հսկում է, վորպեսզի մեր Կարմիր բանակը միշտ անվտանգ զրութիւն մեջ գտնվի:

ՀԱՐՅԵՐ՝ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞վ է տարբերվում Կարմիր զվարդիան Կարմիր բանակից:

Յե՞րբ հրատարակվեց Կարմիր բանակի կազմակերպման դեկրետը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏԱՐԱԾ ԳԼԽՍՎՈՐ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Մենք ասացինք, վոր Կարմիր բանակը ծնունդ առավ կապիտալիստների, կալվածատերերի և սրանց սպասավոր

րողների դեմ կուվելու միջոցին: Կարմիր բանակը ժամանակ չունեց, վորպեսզի նախ սովորեր, մարզվեր և ապա միայն գնար պատերազմի դաշտ: Նա մարզվեց և զարգացավ կուլիներին մեջ: Նա ամրացավ հաղթութիւնների և պարտութիւնների մեջ: Շա՛տ գրքեր կան գրված Կարմիր բանակի մասին:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնն առաջին կուլիներում բուրժուազիայի վրա առաջին հաղթանակը տարան Կարմիր զվարդիայի խմբերը: Իշխանութիւնն անցավ բանվոր դասակարգի ձեռքը: Բայց որ-որի վրա վտանգը մեծանում էր: Յերկրի գանազան մասերում հակահեղափոխական ուժերը՝ գեներալներին, կապիտալիստների դեկավարութիւնը պատրաստում էին Խորհրդային իշխանութիւնն դեմ դուրս: Յերկրի հակահեղափոխական ուժերին միացավ և դրսի թշնամին՝ ոտար յերկրների կապիտալիստները և կապիտալիստական պետութիւնները: Նրանք մի նպատակ միայն ունեյին—վոչնչացնել Խորհրդային իշխանութիւնը:

Արևելքից, Միեբրի կողմից առաջ էր գալիս Կոլչակը, վոր Անգլիայից և Ֆրանսիայից ոգնութիւն, փող էր ստանում: Հարավից դեպի Մոսկվա էր գալիս Դենիկինը: Նրան աջակցում էր իմպերիալիստական Գերմանիայի կառավարութիւնը: Բացի դրանից, տասնյակ գեներալներ իրենց հակահեղափոխական խմբերով գալիս էին խեղդելու բանվոր-գյուղացիական իշխանութիւնը:

Հակահեղափոխական գեներալներին վորոշ չափով ոգնեցին տեղական՝ այսպես կոչված՝ կառավարութիւնները, վոր ստեղծվեցին 1917 թվի Հոկտեմբերից հետո:

Այսպես, որինակի համար, Հայաստանում՝ դաշնակները, վրաստանում՝ վրացի մենշևիկները, Ադրբեջանում՝ թուրք մուսավաթիստները՝ իրենց կառավարութիւնն որով ամեն կերպ աշխատում էին, վորպեսզի Խորհրդային իշխանութիւնը տապալվի: Յերբեմն էլ նրանք ոգնութիւն

եյին ցույց տալիս ցարական գեներալներին, վորոնք կովում եյին Նորհրդային իշխանության դեմ:

Կարմիր բանակն իր առաջին մեծ հաղթանակը տարավ Կոլչակի վրա: Կարմիր բանակի հարվածների տակ Կոլչակը ստիպված յեղավ Վոլգա գետի ափերով փախչել դեպի Սիբիրի խորքերը՝ Կարմիր բանակին թողնելով մեծ քաղաքները:

Մյուս մեծ հաղթանակների մեջ առանձին տեղ են բռնում Դենիկինի վրա տարած հաղթանակները: Այդ ժամանակ Դենիկինը, վորի զորքերի մեջ բավական չափով սպաներ և կազակներ կային, արդեն Տուլա քաղաքին եր մոտենում: Սպիտակները չկարողացան Կարմիր բանակի հարվածներին դիմանալ, ստիպված յեղան յետ նահանջել մինչև Սև ծովի ափերը: Դենիկինը փախավ իր տեղը թողնելով Վրանգելին:

Այդ ժամանակ Նորհրդային իշխանության նոր վտանգ եր սպառնում: Գեներալ Յուզենիչը արշավում եր Պետրոգրադի (Լենինգրադի) վրա: Կարմիր բանակը շեշտակի հարված հասցրեց Յուզենիչին և Վրանգելին: (վերջինս ոգտըվելով Յուզենիչի հարձակումներից, ուզում եր առաջ խաղալ): Կարմիր բանակի այդ հաղթանակների շնորհիվ մեր յերկրի ներքին թշնամիների ուժը կարելի յե համարել ջնջված:

Բացի դրանից Կարմիր բանակը մի ուրիշ, ավելի դժվար կռիվ ևս ունեցավ:

Միջազգային բուրժուազիան, տեսնելով, վոր մեր յերկրի հակահեղափոխական ուժերը ի վիճակի չեն խորտակելու բանվորա-գյուղացիական կառավարությունը, բաց թողեց մեզ վրա Լեհաստանը: Լեհական բուրժուազիան հարձակվեց Նորհրդային Ռուսաստանի վրա: Միջազգային բուրժուազիան զինել եր լեհական բանակը ամեն տեսակի անհրաժեշտ զենքով, հուսալով, թե մեզ կհաղթեն:

Բայց այդ ել իզուր անցավ: Կարմիր բանակը մեծ վարպետությամբ լեհ կապիտալիստների բանակը ջարդեց:

Զպետք ե կարծել, վոր Կարմիր բանակն իր հաղթությունները տարավ մենակ, առանց դրսի ոգնության: Ընդհակառակը, Կարմիր բանակի ուժը կայանում ե նրանում, վոր մեր յերկրի և ոտար յերկրների բազմամիլիոն աշխատավորությունը ոգնում եյին Կարմիր բանակին:

Յերբ Կոլչակը հասել եր Վոլգա գետի ափերը, իսկ Դենիկինը Տուլայի մոտն եր, Մոսկվայի, Լենինգրադի, Իվանով-Վոզնեսենկու, Տուլայի և ուրիշ քաղաքների գործարանների բանվորները հարյուր հազարներով անցան Կարմիր բանակի շարքերը: Իսկ ով իր տեղում մնաց, նա ել ամեն կերպ աշխատում եր Կարմիր բանակի պետքերը հոգալ՝ կոշիկ, մթերք, սպիտակեղեն, հագուստ, զենք պատրաստել, իսկ գյուղացիությունը՝ հաց հասցնել:

Յեվրոպայի բանվորներն ել բավական աջակցություն ցույց տվին Կարմիր բանակին: Յերբ Լեհաստանը դուրս յեկավ մեր դեմ, Լեհաստանի և մյուս յերկրների բանվորները հրաժարվեցին Նորհրդային հանրապետության դեմ կովելու համար զենք փոխադրել, բողոքում եյին, հրաժարվում եյին Կարմիր բանակի դեմ կովի գնալուց:

ՀԱՐՑՅԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ներքին թշնամիներից ովքե՞ր եյին ուղում Նորհրդային իշխանությունը տապալել:

Ու՞մ դեմ ե կովել Կարմիր բանակը:

Ովքե՞ր եյին ոգնում Կարմիր բանակին՝ հաղթանակներ տանելու:

ՊՍՏԵՐԱԶՄ ԶԿԱ, ԲԱՅՑ ԴՐԱ ՎՏԱՆԳԸ ԿԱ.

Լեհաստանի դեմ մեր ունեցած պատերազմը վերջինն եր: Մենք գիտենք, վոր այժմ պատերազմ չկա: Այդ չի նշանակում, վոր այլևս վոչ մի վտանգ մեզ չի սպառնում:

Մենք գիտենք, վոր միջազգային բուրժուազիան չի կարող հաշտվել Խորհրդային իշխանության գոյության անգամ մտքի հետ: Մենք յերբեք չենք կարող համոզված լինել, վոր բուրժուազիան մեզ վրա չի հարձակվի:

Վոր վտանգ կա, և այդ վտանգը մեր դեմն է, այդ կարելի չէ տեսնել այն բանից, վոր կապիտալիստական յերկրները զինվում են: Յերբ վորևէ պետութիւն ուժեղացնում է իր բանակը, կնշանակէ — պատրաստվում է պատերազմի:

Այսպես, որինակի համար, 1914 թվից առաջ կապիտալիստական պետութիւնները արագ կերպով զինվում էին: Այժմ էլ կապիտալիստական յերկրները զինվում են: Կապիտալիստական յերկրների պատերազմական ծախքերը անհամեմատ մեծանում են:

Թէ ինչպես են այդ ծախքերը մեծացել, կարելի չէ տեսնել հետևյալ տախտակից.

Պատերազմական ծախքեր՝	1913 թ.	1921 թ.
Հյուս. Ամերիկ. Միաց. Նահ.	318 միլ. դոլ.	1.845 միլ. դոլ.
Անգլիայինը	142 » »	823.750.000
Ֆրանսիայինը	155 » »	825.800.000
Յապոնիայինը	48 » »	115.000.000

1924 թվին մի միլիոն մարդ ավելի յեր գտնվում զինվորական ծառայության մեջ, քան 1914 թ. պատերազմից առաջ:

Խորհրդային իշխանութիւնը մի քանի անգամ զիմեց բուրժուական յերկրների կառավարութիւններին ռազմական կրճատումներ անելու հարցով: Բայց մեր դիմումը մնաց անհետևանք: Պատերազմական պատրաստութիւնները քանի գնում ավելանում են: Միևնույն ժամանակ կատարելագործվում են կործանիչ միջոցները, հակառակորդի դեմ կռվելու ուժերը, պատրաստում են այնպիսի թնդանոթներ, վոր կարող են խփել հարյուրավոր վերստերի

վրա. պատրաստում են գազեր, վոր վոչնչացնում են ամեն մի կենդանի արարած և այլն: Բուրժուական յերկրներում մի կողմից՝ ամեն կերպ պատրաստվում են զալիք պատերազմի համար, իսկ մյուս կողմից՝ հայտարարում են, թե «պատերազմը անթույլատրելի չէ, պետք է ամեն կերպ պատերազմի առաջն առնել»:

Խորհրդային իշխանութիւնը չի կարող և չպիտի հավատա բուրժուազիայի կեղծ խոսքերին՝ թե բուրժուական յերկրների կառավարութիւնները իբր չեն ուզում պատերազմ: Հարկավոր է շատ լուրջ կերպով հետևել և տեսնել, թե ինչպես տարեց-տարի բուրժուական յերկրներին պատերազմական ուժը գորեղանում է: Այդ զինվորական պատրաստութիւնները վտանգ են բերում Խորհրդային Հանրապետութիւններին: Մենք միշտ պիտի պատրաստ լինենք, նրանք կարող են մեզ վրա հարձակվել:

Ահա թե ինչու ամեն կերպ հարկավոր է այժմ ամբողջնել Կարմիր բանակը, միշտ պատրաստ լինել՝ մեր Խորհրդային յերկիրը պաշտպանելու համար:

ՀԱՐՅԵՐ՝ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչպես է մեծանում կապիտալիստական յերկրների պատերազմական ուժը:

Ինչո՞ւ հարկավոր է ուժեղացնել Կարմիր բանակը նույն իսկ այն դեպքում, յերբ թշնամու հարձակում չկա:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մեր յերկրում բոլոր աշխատավորների համար սահմանված է ընդհանուր, պարտադիր զինվորական ծառայութիւն՝ 19-ից մինչև 40 տարեկան հասակը: Այդ ամբողջ ժամանակամիջոցում ամեն մի բանվոր և գյուղացի համարվում է զինվորական ծառայության յենթակա: Պարտադիր զինվորական ծառայութիւնը արտահայտվում է հետևյալ կերպով. ա) մինչզինակոչային պատրաստու-

Մենք գիտենք, վոր միջազգային բուրժուազիան չի կարող հաշտվել Սորհրդային իշխանության գոյության անգամ մտքի հետ: Մենք յերբեք չենք կարող համոզված լինել, վոր բուրժուազիան մեզ վրա չի հարձակվի:

Վոր վտանգ կա, և այդ վտանգը մեր դեմն է, այդ կարելի չէ տեսնել այն բանից, վոր կապիտալիստական յերկրները գինվում են: Յերբ վորևէ պետութիւն ուժեղացնում է իր բանակը, կնշանակէ — պատրաստվում է պատերազմի:

Այսպես, որինակի համար, 1914 թվից առաջ կապիտալիստական պետութիւնները արագ կերպով գինվում էին: Այժմ էլ կապիտալիստական յերկրները գինվում են: Կապիտալիստական յերկրների պատերազմական ծախքերը անհամեմատ մեծանում են:

Թե ինչպէս են այդ ծախքերը մեծացել, կարելի չէ տեսնել հետևյալ տախտակից.

Պատերազմական ծախքեր՝	1913 թ.	1921 թ.
Հյուս. Ամերիկ. Միաց. Նահ.	318 միլ. դոլ.	1.845 միլ. դոլ.
Անգլիայինը	142 » »	823.750.000
Ֆրանսիայինը	155 » »	825.800.000
Յապոնիայինը	48 » »	115.000.000

1924 թվին մի միլիոն մարդ ավելի յեր գտնվում գինվորական ծառայության մեջ, քան 1914 թ. պատերազմից առաջ:

Սորհրդային իշխանութիւնը մի քանի անգամ դիմեց բուրժուական յերկրների կառավարութիւններին ռազմական կրճատումներ անելու հարցով: Բայց մեր դիմումը մնաց անհետևանք: Պատերազմական պատրաստութիւնները քանի զնում ավելանում են: Միլենույն ժամանակ կատարելագործվում են կործանիչ միջոցները, հակառակորդի զեմ կռվելու ուժերը, պատրաստում են այնպիսի թնդանոթներ, վոր կարող են խփել հարյուրավոր վերստերի

վրա. պատրաստում են դազեր, վոր վոչնչացնում են ամեն մի կենդանի արարած և այլն: Բուրժուական յերկրներում՝ մի կողմից՝ ամեն կերպ պատրաստվում են զալիք պատերազմի համար, իսկ մյուս կողմից՝ հայտարարում են, թե «պատերազմը անթույլատրելի չէ, պետք է ամեն կերպ պատերազմի առաջն առնել»:

Սորհրդային իշխանութիւնը չի կարող և չպիտի հավատա բուրժուազիայի կեղծ խոսքերին՝ թե բուրժուական յերկրների կառավարութիւնները իբր չեն ուզում պատերազմ: Հարկավոր է շատ լուրջ կերպով հետևել և տեսնել, թե ինչպէս տարեց-տարի բուրժուական յերկրները պատերազմական ուժը զորեղանում է: Այդ գինվորական պատրաստութիւնները վտանգ են բերում Սորհրդային Հանրապետութիւններին: Մենք միշտ պիտի պատրաստ լինենք, նրանք կարող են մեզ վրա հարձակվել:

Ահա թե ինչու ամեն կերպ հարկավոր է այժմ ամբողջ կարմիր բանակը, միշտ պատրաստ լինել՝ մեր Սորհրդային յերկիրը պաշտպանելու համար:

ՀԱՐՑՅԵՐԿԻՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչպէս է մեծանում կապիտալիստական յերկրների պատերազմական ուժը:

Ինչո՞ւ հարկավոր է ուժեղացնել կարմիր բանակը նույն իսկ այն դեպքում, յերբ թշնամու հարձակում չկա:

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.**

Մեր յերկրում բոլոր աշխատավորների համար սահմանված է ընդհանուր, պարտադիր գինվորական ծառայութիւն՝ 19-ից մինչև 40 տարեկան հասակը: Այդ ամբողջ ժամանակամիջոցում ամեն մի բանվոր և գյուղացի համարվում է գինվորական ծառայության յենթակա: Պարտադիր գինվորական ծառայութիւնը արտահայտվում է հետևյալ կերպով. ա) մինչգինակոչային պատրաստու-

թյուն, բ) իսկական զինվորական ծառայություն (կադրային զորամասերում կամ յերկրային զորամասերի փոփոխական կազմում) և գ) պահեստում գտնվելը:

Մինչզինակոչային պատրաստություն են անցնում այն բոլոր աշխատավորները, վորոնք 19 տարեկան են դարձել: Մինչզինակոչային պատրաստությունը կատարվում է յերկու տարվա ընթացքում: Այդ պատրաստությունը հարկավոր է նրա համար, վոր ամեն քաղաքացի կարողանա գեների վարժվել, վորպեսզի նրանք, վորոնք հետո կարմիր բանակը պիտի անցնեն՝ գրագետ լինին:

Մինչզինակոչային պատրաստությունը այնպես են անցնում, վոր գյուղացու անտեսության աշխատանքներին փաս չտրվի, վոր բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը իր սնից, աշխատանքից, գործարանից չկտրվի:

Մինչզինակոչները հավաքվում են առանձին մարզական կայաններում, տարվա ընթացքում վոչ ավելի, քան մեկ ամիս ժամանակով: Մինչզինակոչայինները զինվորական ծառայությունն ընդհանուր առմամբ յերկու ամսից ավելի չպիտի տևի:

Մինչզինակոչային պատրաստությունից հետո զինվորակոչության յենթակա յերիտասարդները գնում են կարմիր բանակ, ընդունվում են իսկական զինվորական ծառայության, վորը հինգ տարի յե տևում և հետևյալ կերպ է անցնում.

Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի կադրային կազմի մեջ անընդհատ ծառայելու և յերկարատև արձակուրդում լինելու ժամկետները սահմանվում են հետևյալ կերպով.

Բանվորա-գյուղացիական կարմիր Նավատորմիցում, ինչպես նաև Միացյալ Պետական Քաղաքական Վարչության ծովային զորամասերում,—չորս տարի անցկացնել զորամասում և մի տարի՝ արձակուրդում:

Բանվորա-գյուղացիական կարմիր Ողանավատորմի մասնագետների, սահմանապահ զորամասերում ծառայողների, նալբանդների և գրագիրների համար, վորոնք զինվորական ծառայության մեջ հատուկ կուրսեր են անցել,—յերեք տարի անցկացնել զորամասերում և յերկու տարի արձակուրդում:

Ողանավատորմի մասնագետների ցուցակը կազմում է Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական կոմիսարիատը: Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի մյուս բոլոր զորամասերում, շտաբներում, վարչություններում, հիմնարկություններում—ծառայում են յերկու տարի և արձակուրդում լինում են յերեք տարի:

Բանվորա-Գյուղացիական Բանակի յերկրային զորամասերի փոփոխական կազմում իսկական զինվորական ծառայությունը անցնում է հետևյալ կերպով.

Առաջին տարվա ընթացքում յերեք ամիս մարզանք են անցնում Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի յերկրային զորամասերում: Մնացած 9 ամիսները այդ կատեգորիայի զինվորական ծառայողները անց են կացնում արձակուրդում:

Այդ կատեգորիայի զինվորական ծառայողները յերկրային հրացանաձիգ և թնդանոթաձիգ զորամասերում, ինչպես նաև Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի զիվիզիոն հիմնարկություններում հաջորդ չորս տարիների ընթացքում կանչվում են մարզական կայաններ՝ վոչ ավելի քան հինգ ամիս ժամանակով, իսկ մեկ տարվա ընթացքում վոչ ավել քան յերկու ամիս ժամանակով:

Նույն կատեգորիայի այն զինվորական ծառայողները, վորոնք գտնվում են Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի յերկրային հատուկ զորամասերում, մարզական կայաններ են կանչվում ընդամենը վեց ամիս ժամանակով,—ամեն տարի վոչ ավել յերկու ամսով:

Նույն կատեգորիայի այն զինվորական ծառայողները, վորոնք գտնվում են Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի յերկրային հեծելազորային մասերում, մարզական կայաններ են կանչվում ընդամենը վոչ ավել քան ութ ամիս ժամանակով, ամեն տարի վոչ ավել յերկու ամսով:

Նույն կատեգորիայի այն զինվորական ծառայողները, վորոնք գտնվում են Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի յերկրային հատուկ զորամասերում, մարզական կայաններ են կանչվում ընդամենը վոչ ավել քան վեց ամիս ժամանակով, ամեն տարի վոչ ավել յերկու ամսով:

Բացի դրանից, յերկրային բոլոր տեսակի զորամասերի փոփոխական կազմի զինվորածառայողները մարզակոչների միջև յեղած ժամանակամիջոցներում ամեն տարի յենթակա յեն իրենց բնակատեղում կատարվող զորահավաքի—տարեկան վոչ ավել քան մեկ շաբաթ ժամանակով:

Մնացած բոլոր ժամանակը, իսկական ծառայության յերկրորդ, յերրորդ, չորրորդ և հինգերորդ տարիների ընթացքում, այդ կատեգորիայի զինվորածառայողները գտնվում են արձակուրդում: Այդ զինվորածառայողներին, արձակուրդի ժամանակ, դրանց հրամանատարները կարող են առաջարկել կատարելու այս կամ այն հանձնարարությունը՝ դրանց չկտրելով բնակության տեղից ու աշխատանքից: (Քաղվածք՝ Զինվորական պարտադիր ծառայությանը վերաբերյալ որենքից):

Ծառայությունը վերջացնելուց հետո Կարմիր-բանակայինը անժամկետ արձակուրդ է ստանում և համարվում է պահեստի մեջ, ուր գտնվում մինչև 40 տարեկան (ներառյալ) հասակը: Պահեստում գտնվածները, պատերազմի դեպքում, միշտ կարող են կանչվել բանակ՝ Խորհրդային Հանրապետությունը պաշտպանելու համար:

Վորպեսզի պահեստում գտնվածները չմոռանան Կարմիր բանակում իրենց սովորածը, նրանք կարող են փորձ-

նական զորահավաքի կանչվել զանազան ժամկետներով, վորոնց ընդհանուր տևողությունը յերեք ամսից ավելի չպիտի լինի:

Յերկրային զորամասերի կարմիր բանակայինների համար մարզական կայաններ նշանակում են այն վայրերում, վորոնք զինվորակոչների բնակատեղիին մոտ են գտնվում:

Խոսելով ԽՍՀՄ զինվորական շինարարության մասին, մենք պետք է առանձնապես կանգ առնենք այն հարցի վրա, թե ումնից է կազմված Կարմիր բանակը, ո՞վքեր են մտնում նրա մեջ:

Բայց այդ պարզ կերպով ցույց է տալիս հենց անունը. մեր բանակը—բանվորա-գյուղացիական է: Կարմիր բանակի շարքերը չեն ընդունվում կուլակները, առևտրականները, սպեկուլյանտները և այնպիսի մարդիկ, վորոնք ապրում են անաշխատ վաստակով: Խորհրդային իշխանությունը չի կարող այդպիսիներին գենք վստահել,—դրանք կարող եղ զենքը աշխատավորության դեմ դարձնել:

Կարմիր բանակը—աշխարհումս առաջին բանակն է, վորի մեջ հրամանատարական պաշտոնները վարում են վոչ թե կալվածատերերի, ազնվականների, ֆաբրիկանտների վորդինները, այլ—աշխատավորության զավակները: Բանվորներն ու գյուղացիները Կարմիր բանակում հանդիսանում են և՛ շարքային մարտիկներ, և՛ հրամանատարներ:

Մեր զինվորական դպրոցներում, ուր նոր հրամանատարներ են պատրաստվում, նույնպես ընդունվում են միմիայն աշխատավորներից:

Թե ինչ տարբերություն կա ցարական զորքի և Կարմիր բանակի միջև, այդ պարզ յերևում է հետևյալից. հին ցարական զինվորական Ալեքսանդրյան դպրոցում յուրաքանչյուր 100 սովորողին ընկնում էր՝

Ազնվականներ . . . . .	67
Առևտրականներ և այլ քաղաքացիներ . . . . .	25
Հոգևոր կոչում ունեցողներ . . . . .	3
Գյուղացիներ . . . . .	5
Բանվորներ . . . . .	0 (վոչ մեկը)

Իսկ մեր Խորհրդային հետևագործի II դպրոցում (Մոսկվայում), վոր գտնվում է նույն շենքում, ուր Ալեքսանդրյան դպրոցն էր, յուրաքանչյուր 100 սովորողին ընկնում է՝

Ազնվականներ . . . . .	0 (վոչ մեկը)
Առևտրականներ . . . . .	0 (վոչ մեկը)
Գյուղացիներ . . . . .	60
Բանվորներ . . . . .	35
Ծառայողների զավակներ . . . . .	5

Կարմիր բանակը հին ցարական բանակից տարբերվում է նրանով, վոր յուրաքանչյուր կարմիր բանակային գլխե, թե ինչո՞ւ յե ինքը կանչված բանակ, ինչո՞ւ համար նա պետք է կռվի: Յարական բանակում ոֆիցերները, հրամանատարները թագցնում էին բանակի իսկական նպատակները, մթագնում էին զինվորների գիտակցությունը, ստիպում էին կուրորեն վարժվել: Հին բանակի զինվորը չէր կարող դատել, կարծիք հայտնել: Միակ բանը, վոր նա կարող էր ասել հրամանատարին, հետևյալն էր՝ «Так точно» և «Никак нет, ваше величество»:

Իսկ Կարմիր բանակում ընդհակառակն է. Կարմիր բանակի ուժը կայանում է նրանում, վոր սրա մեջ ամեն մի մարտիկ գիտակցական վերաբերմունք ունի: Ուստի և յուրաքանչյուր կարմիր բանակային այստեղ ստանում է վոչ միայն ռազմական պատրաստություն, այլ և այնպիսի ուսում և դաստիարակություն, վոր անհրաժեշտ է Խորհրդային Հանրապետության ամեն մի քաղաքացուն:

Կարմիր բանակայիններին գաստիարակելու համար աշխատանք է տարվում միշտ և ամենուրեք, զլխավորապես

ակումբներում, գրադարան-ընթերցարաններում և լենինյան անկյուններում:

Կարմիր բանակում այդ նպատակով կան 800 ակումբ, ավելի քան 6000 կրոժոկ, ուր ուսում և կրթություն են ստանում, 2000 գրադարան, ուր կան ավելի քան հինգ միլիոն գիրք:

Անգրագետ նորակոչները բանակ մտնելու հենց առաջին օրերից սովորում են գրագիտություն, այդ պատճառով էլ անգրագետներ չկան Կարմիր բանակում: Ձինվորական ծառայության ժամկետը լրանալուց հետո, կարմիր-բանակայինը վերադառնում է գյուղ զարգացած, ինչպես վայել է լինել Խորհրդային Հանրապետության քաղաքացուն, և բավականաչափ պատրաստ է հասարական ակտիվ աշխատանք կատարելու:

Այդ քիչ է. ավելի ջանասեր և ընդունակ կարմիր-բանակայինները ընդունվում են դպրոցները, դասընթացները, հետո Կարմիր բանակում դառնում քաղաքական ղեկավարներ, կոմիսարներ կամ հրամանատարներ:

ՀԱՐՅԵՐ՝ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչի՞ համար է պետք մինչդիմակոչային նախապատրաստություն:

Ի՞նչ են յերկրային գորահավաքները:

Կարմիր բանակում յուրաքանչյուր մարտիկին ի՞նչպես են կրթում հասարակական աշխատանք տանելու համար:

ԿՍՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ.

Կարմիր բանակի մասին խոսելիս անհրաժեշտ է ասել, թե ի՞նչ դեր է խաղում այնտեղ կոմյերիտականը:

Յերբ մենք անցանք կոմյերիտականի մասին զրույցը, այնտեղ տեսանք, թե ինչ դեր ունի նա մեր սոցիալիստական շինարարության գործում: Բացի զբանից, նա մասնակցում է մեր յերկիրը միջազգային բուրժուազիայի հարձակումներին պաշտպանելու գործում: Կոմյերիտակա-

նին, ամենայն իրավամբ, կարելի յե անվանել Խորհրդային իշխանության պաշտպան: Խորհրդային իշխանության 9 տարվա գոյության ընթացքում կոմյերիտականը արդարացրեց իր այդ պատվավոր կոչումը:

Յերբ Խորհրդային իշխանությունը կռիվ եր մղում սպիտակ գեներալների և բուրժուազիայի բանակների դեմ, Կոմյերիտմիությունն իր լավագույն անդամներին կռվի դաշտ եր ուղարկում: Վորպես կամավոր՝ կռվելու եյին գնում ամբողջ կազմակերպություններով: Կոմյերիտմիության Ա-րդ համագումարը, վոր Մոսկվայում եր հավաքվել այն միջոցին, յերբ Դենիկինը Տուլա քաղաքին եր մոտենում, վորոշեց կոմյերիտականների 30% ֆրոնտ ուղարկել: Միշտ, յերբ Կարմիր բանակը պետք ունեւ իր ուժեղ թշնամիներին վոչնչացնելու, Կոմյերիտմիությունը զորակոչի եր յենթարկում իր անդամներին: Մի այդպիսի զորակոչ հայտարարվեց Կոլչակի դեմ կռվելիս, մյուսը՝ Դենիկինի դեմ և յերբորդը՝ լեհերի դեմ: Ել չենք հիշում առանձին խմբերի, գնդերի մասին, վոր Կոմյերիտմիությունը դեպի ֆրոնտ եր ուղարկում:

Իսկ կոմյերիտականներից նրանք, վորոնք ֆրոնտ չեյին ընկնում, շատ մեծ աշխատանք եյին տանում յերկրի ներսում: Նրանք բանակի համար հավաքում եյին տաք հագուստ, կռվում եյին բանդիտների դեմ (վորոնք Խորհրդային յերկրի ներսից եյին ուզում ոգնած լինել թշնամուն), դեգերտիրներին եյին բռնում և այլն: Շատ մեծ աշխատանք եյին տանում կոմյերիտականները թշնամու բանակում և նրանց զրաված վայրերում: Այդ ամենը նրանք անում եյին, վորպեսզի ոգնեն Կարմիր բանակի հաղթությանը:

Այժմ, յերբ պատերազմ չկա, ամեն տարի Կոմյերիտմիությունը Կարմիր բանակին իր անդամներից տալիս ե տասնյակ հազարավոր մարդ, վորոնք մեր բանվորագյու-

ղացիական յերիտասարդության համար որինակ են դառնում, ամրապնդում են զինվորական դիպցիպլինան:

Բացի այդ բոլորից, Կոմյերիտմիությունը նավատորմը շեֆն ե: Կոմյերիտմիությունը նավատորմին տվել ե իր լավ անդամներից շատերին: Նա ուղարկում ե գրքեր, թերթեր: Շեֆությունը Կոմյերիտմիությանը շատ սերտ և ամուր կերպով ե կապում Կարմիր բանակի հետ:

Կոմյերիտմիությունը մեծ աշխատանք ե տանում մինչզինակոչային նախապատրաստության աշխատանքների կազմակերպման գործում: Ամենից առաջ, Կոմյերիտմիության վրա յե ընկնում մինչզինակոչային յերիտասարդության քաղաքական դաստիարակության, ինչպես նաև նրա տեխնիկական անգրագիտության վերացման հոգսը:

ՀԱՐՑԵՐ՝ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչպես եյին կոմյերիտականները մասնակցում Խորհրդային հանրապետությունների պաշտպանության գործին՝ քաղաքացիական կռվի տարիներում:

Ի՞նչ ե անելու կոմյերիտականը՝ Կարմիր բանակը ուժեղացնելու համար:

Ի՞նչ ե պարտավոր անելու կոմյերիտականը՝ վորպես նավատորմի շեֆ:

Իսկ թե ինչ դեր ե կատարել Կարմիր բանակը Անդրըկովկասի նկատմամբ, — Հայաստանի, Ադրբեյջանի և Վրաստանի խորհրդայնացման որերին, — այդ մասին այսպես ե գրում ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ և Լուսժողկոմ ընկ. Ա. Մուսկյանը՝ «Ազատարար Բանակ» իր հոդվածում:

«Այսոր արդեն շատերն են խոստովանում, վոր Առանձին Կովկասյան Բանակը վոչ թե նվաճող, իմպերիալիստական դեր ե կատարել Անդրկովկասում՝ այլ ազատարար, փրկարար:

«Նախկին մենշևիկները մի անագին կոնֆերենցիա Վրաստանի մայրաքաղաքում և անվանի դաշնակցական-

ների մի ամբողջ խմբակ, այսօր հրապարակով հայտարարում են, վոր մեր յերկիրը մտած Կարմիր բանակը հանդիսացել է այն ուժը, վորն ազատել է Վրաստանի և Հայաստանի ժողովուրդներին իմպերիալիզմի լծից: Ավելին, դաշնակցականները խոստովանում են, վոր Կարմիր բանակը փրկեց հայ ժողովրդին վոչնչացման մահացու վտանգից, և Կարմիր բանակի հետ ել դաշնակցականները դեռ ապագայի հույսեր են կապում:

«Այս ուշացած խոստովանությունները գալիս են ասելու, վոր ազգայնական նեղ կրքերը հանգստանալուց հետո, բխամիտ դաշնակցականներն ու մենչևիկներն անգամ՝ այլ ևս անկարող են լուրջ ազդակող փաստի առաջ: Այո՛, նրանք ստիպված են ի լուր ամբողջ աշխարհի հայտարարել, վոր Կարմիր բանակն իր սվինների վրա վո՛չ թե ստորկություն, այլ ազատություն է բերել բանվորագյուղացիական ժողովրդին:

«Անգլո-Ֆրանսիական և թյուրքական իմպերիալիզմի ողակով շրջապատված Անդրկովկասը կամ պիտի լիներ իմպերիալիստական գաղութ, կամ Խորհրդային Ռուսաստանին դաշնակից: Խնդիրն այսպես եր գրված 1920 թվականին:

«Առաջին դեպքում Անդրկովկասը պիտի լիներ այն բազան, վորի վրա հենվելով յեվրոպական կապիտալը պիտի կանգնեցներ Խորհրդային հեղափոխության ակիբը դեպի Մերձավոր ու Միջին Արևելք: Միաժամանակ այդ բազան պիտի ծառայեր անգլո-Ֆրանսիական, մանավանդ անգլիական իմպերիալիզմի համար իբր հենակետ՝ իր իշխանությունը տարածելու Թյուրքիայի, Պարսկաստանի և Միջին Ասիայի վրա:

«Զուտ իմպերիալիստական, հակահեղափոխական այս ծրագիրը փայփայել են վո՛չ միայն Լոնդոնում ու Փարիզում, այլ և Թիֆլիսում ու Յերևանում: Վրաստանի մենչևիկներն այդ մասին մի ամբողջ հուշագիր են ուղարկել

Յեվրոպա, իսկ դաշնակցականներն ել հո՛ այդ մասին գրում էյին իրենց թերթերում, ճառում ժողովներում:

«Այս իմպերիալիստական ծրագիրն ուղղված եր վոչ միայն Խորհրդային Ռուսաստանի և արևելյան ժողովրդների դեմ, այլ հավասար, յեթե վոչ ավելի չափով, Անդրկովկասի ժողովուրդների դեմ: Դաշնակցականների, մենչևիկների ու մուսավաթականների կողմից անգլո-Ֆրանսիական իմպերիալիզմի հետ, դա՛ դաշնակցությունն եր ձիու և հեծնողի միջև, բայց հեծնողը, ներկա դեպքում, հարկավ, Լոնդոնի և Փարիզի բռնակալներն էյին, իսկ ձիու դերումն ել գտնվում էյին՝ հայ, թուրք, վրացի ժողովուրդները, վորոնց մեջքին նստել էյին մայրները:

«Այս խղճալի տեսարանին վերջ տվեց Կարմիր բանակը, վորն յերևաց Անդրկովկասի սահմաններում այնպիսի մի մոմենտում, յերբ Անդրկովկասը ներկայացնում եր արյան ծով, ազգամիջյան կռիվների մի դաշտ:

«Կարմիր բանակի հարևանությունից խրախուսվելով ապստամբեցին Ադրբեյջանի բանվորները, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները: Կարմիր բանակն ոգնության հասավ նրանց, վորովհետև Կարմիր կարմիր բանակը սեփականություն եր վոչ միայն Ռուսաստանի, այլ և բոլոր տանջված ժողովուրդների:

«Ահա այս ակտն եր, վոր այնքան վրասեց և կատաղեցրեց յեվրոպական իմպերիալիստներին և նրանց սպասավոր դաշնակցականներին, մենչևիկներին և սոցիալ-հայրենասերներին: Այս մասին նրանք շատ են գրել, թանաք ու թուղթ փչացրել: Նրանք պահանջում էյին, և մինչև այժմ ել պահանջում են, վոր Կարմիր բանակը թողնի Անդրկովկասը և դուռը բանա իմպերիալիստական սպիտակ բանակներին առաջ: Նրանք պատրաստ են ամեն ոք ներս խուժելու Անդրկովկաս և այստեղ նորից հաստատելու

իրենց սպասավոր դաշնակցականների, մենչեիկների ու մուսավաթականների լուծը:

«Բայց Անդրկովկասի իսկական տերերը՝ հայ, թուրք, վրացի բանվոր-գյուղացի ժողովուրդներն ուրիշ բան են մտածում. նրանք գիտեն, շատ լավ գիտեն, վոր Կարմիր բանակն իրենց հարազատ մասնիկն է, պահապանը, և վոր այլևս չկա Ռուսաստանի կամ Ուկրայինայի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի Կարմիր բանակ: Վո՛չ, այդ բանակը այժմ կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան Կարմիր Բանակ, մեկ և անբաժան Կարմիր բանակ՝ ամբողջ բանվոր-գյուղացիական Ֆեդերացիայի: Անդրկովկասի ժողովուրդները շատ լավ գիտեն և այն, վոր քանի դեռ չի խորտակվել կապիտալիստական կարգը, այնքան ժամանակ դեռ անհրաժեշտ է փայփայանքի, սիրո առարկա ունենալ Կարմիր բանակը: Այն, անհրաժեշտ է ուժեղացնել, խրախուսել Կարմիր բանակի աշխատանքները, նրա գիտակցութիւնը, նրա տեխնիկան:

«Այդ բոլորը լավ գիտակցում է Անդրկովկասի բանվոր-գյուղացիական ժողովուրդը. ահա թե ինչու նա սերտորեն կապված է Կարմիր բանակի հետ, ուժ, յեռանդ է տալիս նրան և մտադրութիւն չունի պահանջելու, վոր ուրև բանվորներից ու գյուղացիներից կազմված զորամասերը հեռանան Անդրկովկասից:

«Առանձին կովկասյան Բանակը Խորհրդային մեծ Միութեան անհաղթ Կարմիր բանակի լավագույն մասերից մեկն է, և բանվոր-գյուղացիական Անդրկովկասի հարազատ զավակը: Նրա աննման հերոսութիւնները, նրա թափած հորդ արյունը հանուն հայ, թուրք, վրացի ժողովուրդների ազատութեան՝ նրան դարձրել են սիրելի զավակը մեր յերկրի:

«Թող փոռնա՞ն ինչքան ուզում են իմպերիալիստական

գայլերը, թող մլավեն ինչքան կուզեն իմպերիալիստների սպասավոր դաշնակցականները, մենչեիկներն ու մուսավաթականները:

«Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները Կարմիր բանակի հետ են, նրա կողքին, նրա անբաժանելի բարեկամն ու ընկերը»:

ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԱՅՍ ԶՐՈՒՅՅԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Ձեր գյուղում դիմեցե՛ք մի կարմիր-բանակայինի, վորը Սպիտակ գործի դեմ կռվել է, և խնդրեցե՛ք, վոր նա գյուղի յերիտասարդութեանը պատմե այդ կռիվների մասին:

Քարտեզի վրա գտե՛ք այն տեղերը, ուր տեղի յեն ունեցել գլխավոր կռիվները Խորհրդային իշխանութեան թշնամիների դեմ:

Ի՛նչի՞նչ ժողովին հարց դրեք, թե ինչպես կարելի է լավ անցկացնել մինչգինվորակոչային նախապատրաստութիւնը, հաշվեցե՛ք, թե բա՞նի անդրազետ միվչդինակոչային յերիտասարդ կա և ի՞նչ միջոցներով կարելի յե վերացնել նրանց անգրագիտութիւնը:

Ստուգեցե՛ք, թե ձեր կազմակերպութիւնը ի՞նչ է արել նավատորմի համար:

ԽՍՀՄ ՅԵՎ ՈՒՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐԸ

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԽՈՇՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ.

Գրքույկը վերջանում է: Դրանից ընթերցողն իմացավ, թե ի՞նչպիսի հարստութիւններ ունի մեր յերկիրը, ո՞ւմն են դրանք պատկանում: Ընթերցողները նույնպէս իմացան, թե ինչպէս է գործում ու զարգանում մեր արդյունաբերութիւնը, թե ի՞նչ պետք է անել՝ մեր գյուղական տընտեսութիւնը բարձրացնելու համար, ի՞նչ պետք է անել, վորպեսզի այլևս չլինեն աղքատ տնտեսութիւններ: Ընթերցողներն արդեն ըմբռնեցին, թե ինչ դեր են կատարում Կոմունիստական կուսակցութիւնը և Կոմյերիտմիութիւնը, ինչո՞ւ պետք է գոյութիւն ունենա Կարմիր բանակը: Այդ բոլորը միասին վերցրած՝ ոգնեց հասկանալու, թե ի՞նչ է նշանակում—մեր յերկրում սոցիալիզմ կառուցել, ոգնեց ըմբռնելու այն դժվարութիւնները, վորոնք կան մեր յերկրի ներսում շինարարութեան այդ ճանապարհի վրա:

Ներկայումս աշխարհի բոլոր յերկրները կախում ունեն միմյանցից: Յերկաթուղիները, շոգենավերը մի յերկրի արտադրանքը արագորեն փոխադրում են մյուս յերկրները, հեռախոսը, հեռագիրը, ռազիոն աշխարհի բոլոր դեպքերի մասին հաղորդում են կայծակի արագութեամբ:

Շնորհիվ դրան, ինչ վոր տեղի յե ունենում վորևէ յերկրում՝ իսկույն անդրադառնում է մյուս յերկրների կյանքի վրա: Այսպէս, որինակ, հենց վոր Անգլիայում սկսվեց հանքափորների գործադուլը, ԽՍՀՄ բանվորները սկսեցին դրամական ոգնութիւն ցույց տալ գործադուլավորներին և նրանց կոչ անել՝ հաստատ մնալ մղվող պայքարում: ԽՍՀՄ բանվորները անգլիական բանվորներին ուղղած իրենց կոչերի և դիմումների մեջ ցույց տվին, վոր հանքափորների հաղթանակը կնշանակէ սոցիալիզմի մտտեցում ամբողջ աշխարհում: Սթափվեցին Գերմանիայի բանվորները: Այնտեղ տրանսպորտիկների պրոֆեսիոնալ միութեան բանվորների մի մասը սկսեց հրաժարվել Անգլիայի համար քարածուխ բեռներ, վորովհետև այդ քարածուխը կարող էր խանգարել և վիժեցնել անգլիական բանվորների գործադուլը: Բայց Գերմանիայում մտահոգվեցին նաև կապիտալիստները: Իրենց քարածուխը Անգլիա ուղարկելու և դրանից ոգուտ ստանալու համար նրանք կովեցին տրանսպորտիկների դեմ և նրանց ստիպեցին քարածուխը բեռներ: Համարյա նույնը կատարվեց Փրանսիայում: Բոլոր յերկրների բուրժուազիան սկսեց անգլիական հանքափորներին (վոր ուզում են մի կտոր հաց ձեռք բերել) ներկայացնել վորպէս սարսափելի ծուլերի, ապիկարների, իսկ նրանց ոգնողներին—հանցագործներին ու ավազակների: Լեհաստանը, Անգլիայի ցուցմունքով, սկսեց պատրաստվել մեզ վրա հարձակվելու նրա՝ համար, վոր մեր բանվորներն ու գյուղացիները ոգնեցին անգլիական բանվորներին: Բոլոր յերկրները, այդ յերկրների բոլոր դասակարգերը զգացին Անգլիայում տեղի ունեցող գործադուլի նշանակութիւնը, և ամեն մեկը սկսեց ի՛ր տեսակի մասնակցութիւն ցույց տալ նրանում:

Յե՛վ այդպէս է լինում ամեն անգամ, հենց մի լուրջ դեպք է տեղի ունենում վորևէ յերկրում: Ամբողջ յեր-

կրագունդը—դա մի ամբողջութիւնն է, և ով ուզում է իր  
յերկրում ավելի լավ կյանք ստեղծել, նա անպայման  
պետք է իմանա, թե ի՞նչ է կատարվում ուրիշ յերկրնե-  
րում, թե ի՞նչպէս նրանց կյանքը կարող է անդրադառնալ  
իր յերկրի կյանքի վրա: Ահա թե ինչու ԽՍՀՄ ամեն մի  
գիտակից քաղաքացի, մանավանդ կոմյերիտականը, պետք  
է լավ գիտենա ուրիշ յերկրների մասին, նրանցում տեղի  
ունեցող գլխավոր դեպքերն ըմբռնի: Այս գրույցներում  
տրվում են ԽՍՀՄ սահմաններից դուրս գտնված յերկրը-  
ների մասին ամենատարրական տեղեկութիւններ: Այդ  
տեղեկութիւնները հետագայում պետք է խորացնել և  
լայնացնել: Մանավանդ կարևոր է՝ միաժամանակ սովորել  
այդ յերկրների տեղերը գտնել քարտեզի վրա, վորոշել՝  
թե վոր յերկրում մենք ի՞նչքան բարեկամներ և թշնամի-  
ներ ունենք:

Նայեցէք յերկրագնդի քարտեզին: Նրա վրա աչքի յեն  
ընկնում ամենախոշոր պետութիւնները: Դրանք են՝ Ան-  
գլիան, Ֆրանսիան, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ  
Նահանգները, Յայտնիան, Իտալիան: Դիտեցէք ուշադրու-  
թյամբ, թե այդ պետութիւնների տիրապետութեան տակ  
գտնված հողերը ի՞նչպէս են դասավորված, և դուք կտես-  
նէք, վոր դրանք բաժանվում են յերկու մասի—հիմնական  
յերկրների և գաղութների:

Հաղթող յերկրները ձգտում են իրենց գաղութներից  
վորջան կարելի յե շատ բան ծծել, կանգ չեն առնում  
նույնիսկ այն հանգամանքի առաջ, վոր հաղթվածների  
նկատմամբ ունեցած իրենց անսիրտ վերաբերմունքի հե-  
տևանքով ամբողջ ժողովուրդներ են մահանում:

Քանի շատ են ծավալվում կապիտալիստական ֆաբ-  
րիկաներն ու գործարանները, կապիտալիստներն այնքան  
ավելի յեն ձգտում իրենց համար գաղութներ բռնազրա-  
վել: Դրա համար—նրանք պատերազմներ են մղում մի-

մյանց դեմ (1914—1918 թ. թ. պատերազմը մեծ մա-  
սամբ—գաղութների համար մղվող պատերազմ էր. հաղ-  
թող յերկրները Գերմանիայից խլեցին բոլոր գաղութները  
և բաժանեցին իրար մեջ), դրա համար նրանք ձգտում են  
տիրանալ ավելի թույլ յերկրների: Այսպէս, որինակ, հենց  
մեր որերում Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան և Յայտ-  
նիան ձգտում են իրար մեջ բաժանել Չինաստանը:

Յեվ միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-  
տութիւնների Միութիւնն էր, վոր, ինչպէս մենք գիտենք,  
վոչնչացրեց նախկին ցարական գաղութները, նրանցում  
ապրող բոլոր ժողովուրդներին հավասարեցրեց: Յեվ ուու-  
ները, և՛ ուկրայնացիները, և՛ կիրգիզները, և՛ յակուտ-  
ները, և՛ հայերը, և՛ թուրքերը, և՛ այն բոլոր ժողովուրդ-  
ները, վորոնք ապրում են ԽՍՀՄ մեջ, ինչպէս մենք գի-  
տենք, ոգտվում են միատեսակ իրավունքներով, միասին  
ձգտում են կառուցել այնպիսի կյանք, վորի մեջ չկան  
վո՛չ հաղթողներ և վո՛չ էլ հաղթվածներ, վո՛չ ճնշողներ և  
վո՛չ էլ ճնշվածներ:

ԽՍՀ Միութիւնը չի ձգտում խլել ուրիշ ժողովուրդ-  
ների հողերը: Մեր Միութիւնը կարող է աճել և մեծանալ  
միմիայն նրանով, վոր ժողովուրդները Միութեան մեջ կմտ-  
նեն կամ ա՛վոր, այս կամ այն պետութիւնը կամ ժողո-  
վուրդը Միութեանը կանդամագրվեն կամ ա՛վոր:

ԽՍՀՄ չի՛ ուզում պատերազմներ մղել. պատերազմներ  
ուզում են ԽՍՀՄ՝ շրջապատող կապիտալիստական յերկրը-  
ները: Յեվ դրանով նրանք հույս ունեն ԽՍՀՄ դարձնել  
իրենց գաղութ և իրենց համար անհրաժեշտ հում մթերք-  
ների աղբյուր, մի շուկա, ուր կարողանան իրենց ապ-  
րանքներն սպառել: Ահա՛ թե ինչու բոլոր յերկրների կապի-  
տալիստները այնպիսի՝ ատելութեամբ են նայում ԽՍՀՄ  
արդյունաբերութեան զարգացմանը, ճգնում են ամեն կերպ  
այդ յսանգարել:

ՀԱՐՅԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ ներկա-  
յումս աշխարհի բոլոր յերկրները կապված են իրար հետ:  
Ինչո՞ւ կապիտալիստական յերկրները ցանկանում են  
ԽՍՀՄ դարձնել գաղութ:

ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՊԱՅԲԱՐԸ  
ԽՍՀՄ ԴԵՄ.

Բոլոր յերկրների կապիտալիստները զանազան միջոց-  
ներով փորձեցին իրենց յենթարկել մեր յերկիրը: Իրա  
համար նրանք սկզբում փորձեցին ոգնել ուսու կալվածա-  
տերերին և կապիտալիստներին: Յերբ այդ չհաջողվեց և  
Կարմիր բանակը նրանց հարձակումները յետ մղեց,—այս  
անգամ ոտարյերկրյա կապիտալիստները մեզ վրա հար-  
ձակվեցին բացարձակ\*):

Յերբ Խորհրդային իշխանութիւնը զինվորական ուժով  
քարուքանդ անելու փորձերը իզուր անցան, ոտարյեր-  
կրյա կապիտալիստները փորձեցին ԽՍՀՄ աշխատավորու-  
թյանը խեղդել բուրձաբերով (ողակումն)—նրանք դադա-  
րեցրին իրենց ապրանքները ուղարկել մեր յերկիրը՝ ինչ-  
պես և հրաժարվեցին մեր յերկրից վորևե ապրանք գնել:  
Այս կերպ վարվելով, նրանք կարծում էին, թե մեր յերկրի  
ազգաբնակչութիւնը զրկված կլինի ամենամանրաժեշտ  
բաներից ու ապստամբելով՝ կտապալի Խորհրդային իշխա-  
նութիւնը: Այդ տարիները չափազանց ծանր էին: Այն  
ժամանակ մեր արդյունաբերութիւնը դեռ չէր գործում  
և իսկապես վոր մենք ապրանքի խիստ պակասութիւն  
ունեցինք: Բայց աշխատավորութիւնը այդ ևս համ-  
բերությամբ տարավ: Բլոկադան չէր կարող շարունակվել  
թեկուզ այն պատճառով, վոր ոտարյերկրյա արդյունաբե-  
րության համար անհրաժեշտ էր հում նյութ, իսկ հում

\*) Այդ մասին ավելի մանրամասն խոսվեց «Կարմիր բա-  
նակը» գլխում:

նյութ—ԽՍՀՄ մեջ շատ կա: Ոտարյերկրյա արդյունաբե-  
րութիւնը պետք է իր ապրանքները վաճառեր, և այդ ապ-  
րանքների բավական մասը կարելի յէ վաճառել ԽՍՀՄ մեջ:  
Այդ պատճառների ազդեցութեան տակ՝ բլոկադան  
(ողակումն) վերացրին:

Իրանից հետո, պետութիւնները մեկը մյուսի յետե-  
վից սկսեցին մեզ հետ խաղաղութեան պայմանագրեր  
կնքել, իսկ հետո էլ՝ Խորհրդային իշխանութիւնը ճանա-  
չել: Մեզ հետ սկզբում խաղաղութեան պայմանագիր կրն-  
քեց Եստոնիան, հետո Լատվիան, Լիտվան, Ֆինլանդիան:  
1921 թվին պայման է կնքվում Անգլիայի, Իտալիայի,  
Թյուրքիայի, Լեհաստանի, Գերմանիայի հետ և այլն:

Այսպես, բուրձուական պետութիւնները մեկը մյուսի  
յետևից սկսեցին առևտրական խաղաղ հարաբերութիւն-  
ների մեջ մտնել մեզ հետ: Այժմ մնացել է միայն մեկ  
խոշոր պետութիւն, վորը դեռ մեզ չէ ճանաչել. դա—  
Ամերիկայի Միացյալ Նահանգներն են: Բայց չպետք է  
մոռանալ, վոր բոլոր այս պայմանագրերը չեն նշանակում  
ԽՍՀՄ-ի և կապիտալիստական յերկրների միջև յեղած  
պայքարի դադարում: Կապիտալիստները յերբեք չեն կարող  
հաշտվել այն հանգամանքի հետ, վոր իրենց կողքին գո-  
յութիւն ունի Խորհրդային իշխանութիւնը: Նրանք չեն  
կարող հաշտվել այն հանգամանքի հետ, վոր իրենք այլևս  
հնարավորութիւն չունեն ԽՍՀ Միութեան ազգաբնակ-  
չութեանը կողոպտելու, ինչին նրանք ընտելացել էին  
անցած տարիներում և այժմս էլ նրանք ամեն կերպ աշ-  
խատում են մեզ նեղել: Ընթերցողները արդեն զիտեն,  
թե Խորհրդային իշխանութեան համար վորքան անհրաժեշտ  
է արդյունաբերութիւնը լայնացնել: Անգլիայի, Գերմա-  
նիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների բուրձուական,  
վորը մեքենագործական հսկայական գործարաններ ունի,  
կարող էր մեզ անհրաժեշտ մեքենաներ բաց թողնել ապառիկ,

բայց նա այդ չի անում: Այդ քիչ է, արտասահմանյան կապիտալիստները պահանջում են, վոր Խորհրդային կառավարութիւնը, յետե ցանկանում է մեքենաներ ստանալ, պետք է վճարե ցարական կառավարութիւնը բոլոր պարտքերը, ա՛յն ցարական կառավարութիւնը, վորը ժամանակին նրանցից փող է պարտք վերցրած յեղել՝ 1905 թվի հեղափոխութիւնը ճնշելու համար, իր պատերազմները մղելու համար:

Ցարական կառավարութիւնը ամենից շատ պարտք է վերցրել Ցրանսիայից, դրա համար էլ վերջինս մի առանձին կատարի վերաբերմունք է ցույց տալիս դեպի Խորհրդային Ռուսաստանը:

Արտասահմանյան բուրժուազիան մեզ ներկայացնում է ընդամեն 9,650,000,000 ռուբլու հաշիվ: Այդ 9 միլիարդ 650 միլիոն ռուբլին մենք պարտ ենք—

Ցրանսիային	5,800	միլիոն	ռուբլի
Անգլիային	1,500	»	»
Հոլլանդիային	750	»	»
Ամերիկային, Բելգիային և ուրիշ յերկր.	1,600	»	»

Ցարական այս պարտքերի վճարումը մի սարսափելի բեռ կլիներ ամբողջ ազգաբնակչութիւնը համար, մանավանդ գյուղացիական տնտեսութիւնը համար: Բավական է հիշել, վոր 1925—26 տարվա գյուղատնտեսական միասնական հարկը մոտավորապես 250 միլիոն ռուբլի յեր, այսինքն ամեն մի մարդուն ընկնում էր միջին թվով յերկու ռուբ. 50 կոպ.: Մոտ 10 միլիարդ ռուբլին վճարելու համար, պետք կլիներ այդ հարկը ավելացնել մի քանի անգամ այն դեպքում, յետե պարտքը վճարվեր յերկար տարիների ընթացքում: Ահա թե ինչու Խորհրդային իշխանութիւնը հրաժարվում է այդ վճարել: Ծայրահեղ դեպքում նա կարող է գիշել և սկսել պարտքերը

վճարել, սակայն վո՛չ բոլորը, և միայն ա՛յն դեպքում, յետե այդ պետութիւնները մեզ մեծ վարկ տան և վճարեն այն բոլոր վասնների դիմաց, վոր ԽՍՀ Միութիւնը կրել է քաղաքացիական պատերազմում՝ այդ պետութիւնների միջամտելուց, ինչպես նաև բոկադայից, այսինքն՝ յետե նրանք իրենց հերթին վճարեն մեր ներկայացրած հաշիվները: Իսկ այդ հաշիվը շատ ավել է նրանց ներկայացրած հաշիվից և արտահայտվում է այս թվով—39.000.000.000 ռուբլի (39 միլիարդ ռուբլի):

1914—1918 թ. թ. պատերազմից հետո, յերբ բոլոր յերկրների (բացի Ամերիկայից) տնտեսութիւնը խախտված էր, յերբ ամեն տեղ սկսեցին քիչ հացահատիկ ցանել, քիչ ապրանք արտադրել,—թվում էր թե կապիտալիզմը ամբողջ աշխարհում փուլ կգա, թվում էր թե նա չի կարող դիմանալ, բայց տարեց-տարի կապիտալիստները սկսեցին իրենց ֆաբրիկաների ու գործարանների աշխատանքը հետզհետե վերականգնել, առևտուրը լայնացնել: Ճիշտ է, մինչպատերազմյան չափերին նրա՛նք ևս չեն հասել, բայց բավական ուժեղացել են: Կապիտալիզմի ժամանակավոր այդ կայուն դրութիւնը կոչվում է կապիտալիզմի ստաբիլիզացիա: Ոտարագգի այդ բառը այժմ հաճախ պատահում է մեր լրագրներում և դա պետք է ուղիղ հասկանալ:

Շատ առաջ է անցել մանավանդ Ամերիկան: Նա իր տնտեսութիւնը պահել է վոչ թե առաջվա մակարդակի վրա, այլև թռիչքներ է գործել: Այդ բացատրվում է նրանով, վոր նա չի մասնակցել 1914—1918 թ. թ. պատերազմին: Բացի այդ, նա պատերազմող կողմերին առատորեն փողեր էր պարտք տալիս և այժմ այդ փողերը նրանցից յետ է առնում մեծ տոկոսներով:

Այսպես ուրեմն, ԽՍՀՄ առաջվա պես շարունակում է մնալ աշխարհումս միակ յերկիրը, ուր իշխանութիւնը

պատկանում ե աշխատավորութեանը, ուր տնտեսութեան զարգացումը կատարվում է վոչ թե հոգուտ կալվածատերերի և ֆաբրիկանտների, այլ ամենքի կյանքի՝ բարվոքման համար: Բայց իՍՂՄ մենակ չէ: Բուրժուական ամեն մի յերկրում նա ունի բարեկամներ և պաշտպաններ: Անցնենք դրանց:

ՀԱՐՅԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. ԽՍՀ Միութեան վո՞ր շրջաններն էին գրավել ոտարյերկրյա կապիտալիստների գործերը:

Ինչո՞ւ բրկադան առանձնապես ծանր էր՝ բաղաբացիական կովից հետո:

Ի՞նչ նշանակութիւն կունենա գյուղացիական տընտեսութեան համար ցարական պարտքերի վճարումը:

Բոլոր կապիտալիստական յերկրներից այժմ վո՞րն է ամենից ուժեղը:

Ի՞նչ ԳԵՍ ԵՆԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԻՐԵՆՑ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

Կապիտալիզմը ժամանակավորապես ամրապնդվել է: Բայց բանվորական մասսաների դրութիւնը, մանր գյուղացիութեան դրութիւնը որեցոր ավելի ծանր է դառնում: Կապիտալիստական յերկրում աշխատանքային որն ավելանում է (անգլիական հանքատերերը առաջարկում են հանքափորներին յերկրի տակ աշխատել որական 9 ժամ) պակասում է աշխատավարձը, աճում է գործազուրկների թիվը: Բանվորները փորձում են պայքարել իրենց դրութիւնը բարվոքելու համար: Գերմանիայում և Վենգրիայում նրանք փորձեցին դուրս գալ նույնիսկ զենքը ձեռին (1918 թվին Բավարիայում և Վենգրիայում կազմվեց նույնիսկ խորհրդային իշխանութիւն), բայց դուրս յեկավ վոր արտասահմանյան բուրժուազիան ավելի լավ էր կազմակերպված, քան մեր բուրժուազիան էր, և բանվորներին ջարդեցին: Բացի դրանից, արտասահմանի բանվորները

վճռողական պայքարի ըուպեյին չունեյին հարկավոր ղեկավարներ: Այնպիսի կուսակցութիւն, ինչպիսին մեր Կոմունիստական կուսակցութիւնն է—նրանք չունեյին: Իսկ սոցիալ-դեմոկրատ մենշեիկների կուսակցութիւնը գնաց համաձայնութիւն կնքելու բուրժուական կառավարութիւններին հետ: Յե՛վ այժմ Անգլիայում, Գերմանիայում, Յրան սիայում, այսպես կոչված սոցիալիստական կուսակցութիւնների ներկայացուցիչները ոգնում են կապիտալիզմի ստաբիլիզացիային, աշխատում են խլացնել պայքարը կապիտալիստների և բանվորների միջև: Նույնը անում են արտասահմանյան պրոֆմիութիւնները: Ահա՛ թե ինչու ներկայումս կարեորագույն խնդիր է հանգիստանում՝ Կոմունիստական կուսակցութիւնների ուժեղացումը արտասահմանում: Կոմունիստական Ինտերնացիոնալի (կոչվում է նաև Յերրորդ Ինտերնացիոնալ՝ տարբերելու համար Յերկրորդ Ինտերնացիոնալից, վորը միացնում է մենշեիկներին և ուրիշ սոցիալիստ-համաձայնողականներին) ղեկավարութեամբ դանդաղ, բայց շարունակ աշխատում են բոլոր յերկրների Կոմունիստական կուսակցութիւնները: Ներկայումս Կոմունիստական կուսակցութիւններ գոյութիւն ունեն աշխարհիս բոլոր յերկրներում և իրենց շարքերում ունեն մինչև մեկ ու կես միլիոն մարդ:

Կոմունիստական կուսակցութեան հետ կողք-կողքի պայքարում է Կոմունիստական Յերիտասարդութեան Ինտերնացիոնալը: Այդ Ինտերնացիոնալը միացնում է ավելի քան 2 միլիոն մարդ: Մեր ՀԼԿՅԵՄ նույնպես մտնում է Կոմունիստական Յերիտասարդութեան Ինտերնացիոնալի մեջ:

Վերջին ժամանակներս հսկայական նշանակութիւն է ստանում նաև Միջազգային Պրոֆեսիոնալ Միութիւնների կազմակերպութիւնների աշխատանքը, Պրոֆեսիոնալ Միութիւնների Ինտերնացիոնալի (կրճատ՝ Պրոֆինտերնի) աշխատանքը: Այդ կազմակերպութեան սկիզբը դրվեց միայն

1920 թվին: Այդ կազմակերպությունը աշխատում է, վոր պրոֆմիտությունները համերաշխ պայքարեն աշխատանքային 8 ժամյա որ ձեռք բերելու համար, համերաշխ պայքարեն նոր պատերազմների վտանգների դեմ: Այդ գործում ամենախոշոր հաջողությունը պետք է համարել Անգլիայի պրոֆմիտությունների և ԽՍՀՄ պրոֆմիտությունների վարած բանակցությունների աջող յեղքը:

Ներկայումս Պրոֆինատերնի մեջ են մտնում աշխարհի բոլոր պրոֆմիտությունների մոտավորապես կեսը:

Բանվորական շարժման կողքին աճում է և ուժեղանում նաև գյուղացիական շարժումը: Ուժեղ է աճում մանավանդ գաղութային յերկրներում: Հնդկաստանի, Չինաստանի, Յեգիպտոսի հարյուր միլիոնավոր գյուղացիներ ապստամբում են ոտարյերկրյա կապիտալիստ-նվաճողներին դեմ: Այդ շարժումը հսկայական նշանակություն է ստանում: Գաղութների անջատումը—նշանակում է կապիտալիստական յերկրների կործանում, ամբողջ կապիտալիզմի կործանում: Ահա՛ թե ինչու ընկ. Լենինը մեզ ուսուցանում եր՝ ուշադրությամբ ուսումնասիրել արևելյան յերկրների դրությունը և հետևել այնտեղ ծավալվող պայքարին, դրան ոգնել:

Հեղափոխական գյուղացիությունը գնում է բանվոր դասակարգի յետևից, լցվում է Կոմունիստական կուսակցություն շարքերը:

Ահա այդ պայքարը հարուցում է կապիտալիստների կատաղի դիմադրություն: Հեղափոխական բանվորներին և գյուղացիներին լռեցնելու համար պատրաստ են՝ զորքը, պոլիցիան, դատարանը, յեկեղեցին:

Կապիտալիստները այդ միջոցներով անողոք են վերաբերվում դեպի Կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները: Բուրժուական շատ յերկրներում Կոմունիստական կուսակցությունները գոյություն ունեն անլեզալ,

գործում են գաղտնի, ընդհատակում. նրանց այդտեղ է քշել բուրժուական իր հալածանքներով:

Կոմունիստների ժողովները, նրանց կազմակերպությունները ցրիվ են տալիս, նրանց լրագրները փակում են, կոմունիստները յենթարկվում են հալածքների, բանտարգելության և այլն: Ըստ վորում հալածվում են վոչ միայն չափահաս կոմունիստները, այլև յերիտասարդ կոմյերիտականները. հազարավոր կոմունիստներ ու կոմյերիտականներ զոհ են գնացել բուրժուազիայի հալածանքին, հազարավոր կոմունիստներ տառապում են բանտերում ու աքսորում:

Հեղափոխական բանվորների դեմ պայքարելու համար բուրժուական ունի իր հատուկ կազմակերպությունը, վորը կոչվում է Ֆաշիստական:

Նրանք քարուքանդ են անում բանվորական ակումբները, պրոֆեսիոնալ միությունները, կրոնիկները, կոոպերատիվները: Նրանք հրդեհում են բանվորների բնակարանները, տանջում ու սպանում այն բանվորներին, վորոնց նկատմամբ կասկածում են, թե սրանք համակրում են կոմունիզմին: Վերջապես, նրանք պատժիչ գործարմբեր են ուղարկում ըմբոստացող գյուղացիների դեմ:

Բուրժուազիայի լծի տակ տառապող հեղափոխական բանվորների և գյուղացիների դրությունը մի քիչ թեթևացնելու համար, կազմակերպված է Հեղափոխական Մարտիկներին Ոգնող Միջազգային Ընկերություն (ՄՕՄՄ, ՄՈՊՐ): Այդ ընկերությունը հարյուր հազարավոր անդամներ ունի:

Այսպես, ամեն ուղղությամբ էլ աճում ու լայնանում է ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների միությունը, նախապատրաստվում է կապիտալիզմի անխուսափելի կործանումը:

ՀԱՐՅԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ արտասամանում բանվորներին չհաջողվեց իշխանությունն իրենց ձեռքը վերցնել:

Կոմունիստական կուսակցութեան հետ միասին ե՛լ ինչ  
կազմակերպութիւններ են պայքարում բանվորական մաս-  
սաների ազատագրութեան համար:

Գյուղացիական շարժումը կապիտալիստներէ դեմ վո՞ր  
յերկրներում ե ուժեղ:

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԱՆՆՈՒՍԱՓԵԼԻ ԿԼԻՆԻ ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐՀՈՒՄ.

Այժմ ամբողջ աշխարհը բաժանված է յերկու բա-  
նակի—մի կողմը կապիտալիստներն են, մյուս կողմը—  
բանվորները՝ ճնշված գյուղացիների հետ միասին: Կապի-  
տալիստները ձգտում են իշխանութիւնն իրենց ձեռքից  
բաց չթողնելով՝ ապահովել հին ուժիւնը, իսկ բանվորներն  
ու ճնշված գյուղացիութիւնը պայքարում են իրենց հա-  
մար լավագույն կյանք ստեղծելու: Նրանք գիտեն, վոր  
մշտական աղքատ վիճակից ու ճորտութիւնից իրենց  
փրկել կարող է միմիայն սոցիալիզմը:

Մենք արդեն ասել ենք, թե ինչ է սոցիալիզմը. սո-  
ցիալիզմի որով կոսհամանվեն այնպիսի կարգեր, վորոնց  
շնորհիվ մարդկանց միահամուռ ջանքերով կհաղթահարվեն  
աղքատութիւնն ու չքավորութիւնը. այդպիսի կարգերի սահ-  
մանումով բոլորն էլ բավական չափով կունենան և՛ սնունդ,  
և՛ հագուստ, և՛ վոտնաման, և՛ ընդարձակ բնակարաններ.  
Գրա համար անհրաժեշտ է, վոր բոլոր ֆաբրիկաները, բո-  
լոր գործարանները շատ ավելի լավ գործեն, քան այժմ է.  
անհրաժեշտ է, վոր հողամշակութեան կատարելագործված  
յեղանակներ գործադրվեն. իսկ այդ բոլորին շատ ավելի  
հեշտ կլինի հասնել այն ժամանակ, յերբ ամբողջ աշ-  
խարհի բոլոր հարստութիւնները մեկը մյուսին կլրացնեն:  
Այսպես, որինակ, Գերմանիայում շատ կա քարածուխ,  
բայց քիչ կա յերկաթահանք, իսկ Ֆրանսիայում շատ կա  
յերկաթահանք, բայց քիչ կա քարածուխ, ուստի և վա-  
ղուց, շատ վաղուց Ֆրանսիայի բուրժուազիան և Գեր-

մանիայի բուրժուազիան աշխատում են միմյանցից խլել  
իրենց համար անհրաժեշտ հողերը: Յեթե այդ յերկրնե-  
րում իշխանութիւնն աշխատավորութեան ձեռքն անցնի,  
ապա կովելու փոխարեն սրանք կկառուցեն նոր հսկայա-  
կան այնպիսի ֆաբրիկաներ և գործարաններ, վորոնք  
գերմանական քարածուխի ոգնութեամբ ֆրանսական յեր-  
կաթից կմշակեն գյուղատնտեսական մեքենաներ, շոգեմե-  
քենաներ, ճանապարհների համար յերկաթագծեր և տնտե-  
սութեան զարգացման համար ուրիշ շատ առարկաներ: Այն  
ժամանակ շատ դյուրին կլինի մեքենաներ տեղափոխել  
մեզ մոտ, և մեր ընդարձակ դաշտավայրերը, հրաշալի  
մշակվելով, կարող կլինեյին ամբողջ աշխարհը կերակրել:  
Սոցիալիզմը կջնջի բոլոր պետութիւնների սահմանները,  
աշխարհի բոլոր հարստութիւնները կդարձնի բոլոր մարդ-  
կանց սեփականութիւն: Առանց դրան—կապիտալիստական  
պետութիւնների մեջ առաջվա պես միշտ էլ տեղի կունե-  
նան պատերազմներ, առանց դրան—յերկրի բաժան-բաժան  
հարստութիւնները չեն կարող անհրաժեշտ ոգուտը տալ  
բոլոր մարդկանց:

Ահա՛ թե ինչու համաշխարհային հեղափոխութեան  
հաղթանակը անխուսափելի յէ, ահա՛ թե ինչու ամբողջ  
աշխարհում պետք է սոցիալիզմ լինի:

Առաջինը մեր յերկիրն էր, վոր սոցիալիզմի ուղիով  
ընթացավ. մեզ համար շատ դժվար է սոցիալիզմ կառու-  
ցել միայնակ, բայց տարեց-տարի ուժեղանում է մեր  
տնտեսութիւնը: Աշխարհի տասնյակ միլիոնավոր աշխա-  
տավորութիւնը ուշի-ուշով հետևում է թե ի՞նչ է կա-  
տարվում մեր յերկրում, միլիոնավոր տանջված մարդիկ  
մեր յերկրում կատարվածից որինակ են վերցնում, դաս  
են առնում, թե ինչպես պետք է պայքարել:

Համամիութենական Կոմունիստական Կուսակցու-  
թիւնը, ինչպես միշտ, դժվարութիւնները հաղթելով, ճա-

Նապարհ ե հարթում և ցույց ե տալիս բոլոր վտանգները  
 Նա ԽՍՀՄ բանվորներին և գյուղացիներին սովորեցնում  
 և, վոր մեր պայքարը ամբողջ աշխարհի աշխատավորու-  
 թյան պայքարի միայն մի մասն ե, և վոր վերջնական  
 հաղթանակը կլինի միայն այն ժամանակ, յերբ սոցիա-  
 լիզմը բոլոր մարդկանց կմիացնի համաշխարհային ընդ-  
 հանուր աշխատանքի մեջ:

**ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ պետու-  
 թյունների սահմանները խանգարում են ֆաբրիկաների և  
 գործարանների զարգացմանը:**

Համաշխարհային հեղափոխության համար ի՞նչ նշա-  
 նակություն ունի մեր յերկիրը:

**ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԴԱՅԱԾԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.**

Նայեցե՛ք այն բոլոր քարտեզները, վոր կան դպրոցում  
 և խրճիթ-ընթերցարանում: Սովորեցե՛ք քարտեզ կարդալ:  
 Աշխատեցե՛ք, վոր քարտեզներ լինեն բոլոր կարմիր-անկյուն-  
 ներում, վորպեսզի լրագրում միջազգային դրության մասին  
 կարգալիս, կարողանաք քարտեզի վրա համապատասխան  
 տեղերը ցույց տալ:

Տեղեկացե՛ք, Հեղափոխությանը Ոգնող Միջազգային  
 Ընկերության («ՄՈՊՐ») գործնեյության մասին և խորհեցե՛ք ք,  
 թե ի՞նչ կարող ե անել Կոմյերիտմիության բջիջը, վոր-  
 պեսզի աշխատանքն այդ ուղղությամբ ավելի լավ գնա:

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

	Եջ
Պետակցության և գյուղական կոմունիստի մասին . . . . .	3
Կոմյերիտմիության անելիքները . . . . .	21
Կարմիր բանակը . . . . .	38
ԽՍՀՄ և ուրիշ յերկիրները . . . . .	58

**ԼՈՒՅՍ-ԵՆ ՏԵՍԵԼ ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՆԱՅԵՎ I ՅԵՎ II ՊՐԱԿՆԵՐԸ**

Առաջին պրակի բովանդակությունը

**Առաջաբան.** Ինչպես պետք ե այս գրքից ոգտվել (մեթոդ. ցուցմունքներ).

- I. Մեր յերկիրը.
- II. Ո՞վ և ինչպես ե մեր յերկիրը կառավարում.
- III. Խորհուրդների աշխատանքը գյուղում.
- IV. Ազգային հարցը և ինչպես ե նա լուծվել ԽՍՀՄ մեջ.

Յերկրորդ պրակի բովանդակությունը

- I. Մեր արդյունաբերությունը.
- II. Մեր արդյունաբերության հետագա զարգացման ուղիները.
- III. Գյուղական տնտեսության զարգացումը.
- IV. Կուլակի, միջակի և չքավորի մասին.
- V. Կոսպերացիան ԽՍՀՄ մեջ և նրա նշանակությունը գյուղա-  
 ցիտության համար.



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.



---

**ПОЛИТИЧЕСКИЕ БЕСЕДЫ  
с КОМСОМОЛЬЦЕМ**

**по В. ВИРГАНСКОМУ**

---

На армянском яз.

Выпуск III.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.  
Москва, Никольская, 10.

« Ազգային գրադարան



NL0187416

